

ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՆ

ԱՅԱԹՈԼԼԱԿ ԽՈՍԵՅՆԻԻ
ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

ԵՐԵՎԱՆ 2004

ՆԻԿՈԼԱՅ ԶՈՎՋԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՆ

ԱՅԱԹՈԼԼԱԿ ԽՈՄԵՅՆԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԵ ՁԵՐԵՋՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»
(ԱՄՆ)

A II
89043



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

НИКОЛАЙ ОГАНЕСЯН

ИРАН
ЭПОХА АЯТОЛЛЫ ХОМЕЙНИ

СПОНСОР
“ФОНД АРМЕН И БЕРСАБЕ ДЖЕРЕДЖЯН”
(США)

ЕРЕВАН 2004

327 (55)

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NIKOLAY HOVHANNISYAN

IRAN
THE AYATOLLAH KHOMAYNI'S EPOCH

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY
"ARMEN AND BERSABE JEREJIAN FOUNDATION", Inc.
(USA)

YEREVAN 2004

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԳ. 327
ԳՄԴ. 66.4
Հ 854

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հովհաննիսյան Ն.,

Հ 854 Իրան. Այթաթլլահ Խոմենիի դարաշրջանը. – Եր: Զանգակ-97, 2004, 112 էջ:

Աշխատությունն ընդգրկում է հեղինակի 1990–ական թվականներին հրատարակված հոդվածները և մեկնադրությունների համապատասխան մասերը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, որոնք վերաբերում են խնդրո առարկա բեմային: Օգտագործված են նաև պաշտոնական գործուղումների ժամանակ իմամ Խոմենիի ներկայացուցիչների և կողմնակիցների հետ նրա հանդիպումների ընթացքում տեղի ունեցած քննարկումների և զրույցների նյութերը, այդ թվում և այնպիսիները, որոնք ժամանակին հասկանալի պատճառներով տեղ չեն գտել նրա աշխատություններում:

Հասցեագրված է հայագետներին, իրանագետներին, արաբագետներին, թուրքագետներին, միջազգային և ռեգիոնալ հարաբերությունների մասնագետներին և այլն:

В сборник вошли статьи и отрывки из монографий, опубликованные автором в 1990-е годы, на армянском, русском и английском языках, касающиеся политики Исламской Республики Ирана в начальной стадии исламской революции. Используются также материалы дискуссий и бесед с представителями имама Хомейни во время официальных командировок автора, в том числе и материалы, которые в свое время, по понятным причинам, не могли быть опубликованы.

Адресован арменоведам, иранистам, арабистам, туркологам, специалистам по международным и региональным отношениям, и т.д.

In this volume are included articles and excerpts from monographs of the author, published in Armenian, Russian and English in 1990s, concerning the history and policy of the Islamic Republic of Iran in the early stage of the Islamic revolution, including some materials of discussions with the representatives of Imam Khomeini, during the visit of the author the Middle East, which at that time were not possible to publish.

Is addressed to Armenologists, Iranists, Arabists, Turkologists, specialists on International and Regional relations, etc.

Հ 0802000000 2004
0003(01) 2004

ԳՄԴ. 66.4

ISBN 99930 – 2 – 865 – 7

© Հովհաննիսյան Ն.
© «Զանգակ-97» հրատ.

ՄՈՒՏՔ

1979 թ. սկզբներին Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը, անասան թվացող շահական վարչակարգի տապալումը և դեռևս 1925 թ. Իրանում հաստատված Պահլավիների դինաստիայի երկրորդ ու վերջին շահ Մուհամմադ Ռեզա Պահլավիի անվերադարձ հեռանալը երկրից և Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) հռչակումը շրջադարձային բնույթ ունեցող երևույթներ էին, որոնք բացառիկ տեղ են գրավում Իրանի բազմադարյան պատմության մեջ:

Շատերի համար անակնկալ թվացող այդ շրջադարձն իր նշանակությունը և հետևանքներով չսահմանափակվեց միայն իրանական շրջանակներով: Առանց չափազանցության կարելի է ասել, որ իրանական հեղափոխությունը ցնցեց ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքը, համայն մուսուլմանական աշխարհը՝ Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս, և մեծ ազդեցություն ունեցավ միջազգային հարաբերությունների վրա:

Հեղափոխությանը հաջորդած առաջին ամիսներին, կարելի է ասել նույնիսկ առաջին մեկ-երկու տարիներին, ահ ու սարսափ էր տիրում Իրանի հարևան մի շարք երկրներում, նրանց կառավարող վերնախավում, որոնք վախեցնում էին իրենց երկրներում իրանական մոդելի հնարավոր հաստատումից: Այդ մտավախությունն ամենևին էլ անհիմն չէր, եթե նկատի ունենանք, որ ԻԻՀ նոր ղեկավարությունը չէր թաքցնում իսլամական հեղափոխության արտահանման իր մտադրությունները և բացահայտորեն կոչ էր անում մուսուլմանական երկրների հավատացյալներին՝ հետևել Իրանի օրինակին:

Իսլամական հեղափոխության հաղթանակը Իրանում խորապես մտահոգեց ԱՄՆ-ին, ԽՍՀՄ-ին և Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներին:

Շահական վարչակարգի տապալումով ԱՄՆ-ը կորցրեց իր ամենահուսալի հեմարանը մերձավորարևելյան տարածաշրջանում, որը միաժամանակ կարևոր օղակ էր նրա հակախորհրդային ստրատեգիական համակարգում:

Խորհրդային Միության ղեկավարությունը լրջորեն մտահոգ էր, եթե ոչ վախենցած, քե ինչպիսի ազդեցություն կարող են գործել իրանական իսլամական հեղափոխությունը և նրա հռչակած լոզունգները Խորհրդային Միության իսլամադավան հանրապետությունների և շրջանների ազգաբնակչության վրա: Եվ ինչպես վկայեց խորհրդային ղեկավարության կողմից 1980 թ. սկզբներին Տաշքենդում գումարված խորհրդային իսլամագետների փակ կոնֆերանսը, որի մասնակիցներից էր նաև տողերիս հեղինակը, Կրեմլը խուճապահար վիճակում էր հայտնվել: Նա չգիտեր ինչ անել և ինչպես դիմագրավել իրանական հեղափոխության տարածմանը Կենտրոնական Ասիայի խորհրդային մուսուլմանական հանրապետություններում: Կրեմլն իր մասնագետ-գիտնականներից աղերսում էր տալ իրեն մի այնպիսի դեղատոմս, որը կկանխեր իսլամիզմի պոռթկումը իր տարածքներում, հուսալի պատենշ կստեղծեր ընդդեմ իրանական իսլամական հեղափոխության արտահանման և կապահովեր իր հետագա տիրապետությունն այդ շրջաններում:

Տագնապը համակել էր Իրանի հարևան մի շարք արաբական երկրների՝ Մաուրյան Արաբիային, Քուվեյթին, Հորդանանին, Արաբական Միացյալ Էմիրություններին, Եգիպտոսին և այլն, որտեղ տիրապետող էր իսլամի սուննի կամ ուղղափառ ուղղությունը՝ ի տարբերություն Իրանի, որտեղ տիրապետող էր իսլամի շիական ուղղությունը: Իսկ հակադրությունն այդ երկու քեների միջև ունի պատմական խոր արմատներ, որի պատճառով նա սուննիների և շիաների միջև շատ հաճախ վերածվում է արյունալի բախումների:

Արաբական սուննի երկրների վերնախավը իրանական իսլամական հեղափոխության հաղթանակի և արտահանման մեջ տեսնում էր վտանգավոր մարտահրավեր իր տիրապետությանը:

Մի շարք հանգամանքների բերումով առանձնահատուկ ծանր, կարելի է ասել՝ խոցելի վիճակում հայտնվեց Իրաքը: Իրաքի արաբ բնակչության մեծամասնությունը դավանում է շիիզմ, ինչպես և Իրանում: Նրանց սրբակենտրոնները նույնն են, ինչպես Իրաքի տարածքում գտնվող ան Նաջաֆը, Քերբելան, Կազիմայնը և այլն: Ու քե Իրաքի արաբ բնակչության փոքրամասնությունը կազմում են սուննիները, սակայն Իրաք պետության կազմավորումից՝ 1921 թվականից ի վեր երկրի իշխանությունը գտնվում է այդ սուննի փոքրամասնության ձեռքում, որը մշտապես լարվածության աղբյուր է հանդիսանում սուննիների և շիաների միջև:

Մյուս կողմից՝ Իրաքի սուննի բնակչության զգալի մասը կազմում են ոչ էթնիկ արաբները՝ քրդերը: Սակայն Իրաքի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ սուննի արաբների և սուննի քրդերի միջև ոչ միայն գոյություն չունի համերաշխություն և համագործակցություն, այլ, ընդհակառակը, նրանց միջև մշտապես պահպանվում են լարված հարաբերություններ, որոնք մեկ անգամ չէ, որ վերածվել են երկարատև պատերազմական գործողությունների:

Այսպիսով՝ կոնֆեսիոնալիզմի առումով Իրաքի փոքրամասնություն հանդիսացող սուննի ղեկավարությունը հակասության մեջ է գտնվում երկրի բնակչության մեծամասնությունը կազմող շիա արաբների հետ, իսկ էթնիկական առումով՝ սուննի քրդերի հետ: Այս պարագան խիստ խախտու էր դարձնում Իրաքի սուննի ղեկավարության և նրա պրեզիդենտ Սադամ Հուսեյնի դիրքերը՝ իրանական-շիական հնարավոր ագրեսիայի դեպքում: Մեր կարծիքով՝ այս հանգամանքն իր որոշակի դերակատարումն ունեցավ 1980 թ. Իրանի և վտանգավոր գոտում հայտնված Իրաքի միջև պատերազմի առաջացման գործում:

Պետք է նկատի ունենալ նաև այն պարագան, որ շատ խորամանկ ձևով Իրաքին Իրանի դեմ պատերազմի մղեցին ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, որոնք հույս ունեին Իրաքի միջոցով կանխել իրանական իսլամական հեղափոխության արտահանումը և պատմեշ կանգնեցնել նրա սկզբունքների տարածման առջև:

Իսլամական հեղափոխության հաղթանակը խիստ անհանգստացրեց Իսրայելին, մանավանդ այն բանից հետո, երբ Իրանի նոր ղեկավարներն իրենց անվերապահ աջակցությունը հայտնեցին պաղեստինցիներին՝ հարցականի տակ դնելով Իսրայելի՝ որպես պետության գոյությունը:

Եվ, վերջապես, Իրանում տեղի ունեցած արմատական փոփոխությունները մտահոգեցին նրա դարավոր ախոյան Թուրքիային: Իրանի դիրքերի ամրապնդումը և նրա հնարավոր վերածումը տարածաշրջանային կենտրոնի, թուրքական ղեկավարությունն ընկալում էր որպես մարտահրավեր և սպառնալիք Մերձավոր և Միջին Արևելքի առաջատար պետությունը դառնալու նրա քաղաքական երազանքներին:

Այսպիսով՝ շահական վարչակարգի տապալումը և Իրանի վերածումը իսլամական աստվածապետության խարխլեց տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող մերձավորարևելյան աշխարհաքաղաքական համա-

կարգը: Հաստատվեց ուժերի նոր հավասարակշռություն և աշխարհաքաղաքական նոր իրողություն:

Իրանում և մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցած շրջադարձային բնույթի այս փոփոխություններն անմիջականորեն կապված են այաթոլլահ Խոմենյիի անվան հետ: Նա երկար տարիներ արիաքար դեկավարում էր հակաշահական ընդդիմությունը, որը նրան մեծ հեղինակություն բերեց: Նա էր իսլամական հեղափոխության անառարկելի առաջնորդը և նորաստեղծ աստվածապետության՝ Իրանի Իսլամական Հանրապետության հոգևոր, գաղափարական, քաղաքական և ռազմական ղեկավարը: Նրա խոսքը, հռչակած դրույթները և սկզբունքներն օրենքի ուժ ունեին, որն անվերապահորեն ընդունվում էր բոլորի կողմից: Պատմության մեջ շատ սակավ են այնպիսի գործիչները, որոնք իրենց ձեռքում կարողացել են կենտրոնացնել այդպիսի լայն իշխանություն, և որին կուրորեն, առանց վերապահումի հավատացել և պաշտպանել են բնակչության ամենալայն խավերը, որպիսին իմամ Խոմենյին էր: Նա այդպես էլ չունեցավ շատ թե քիչ մշանակալի ընդդիմություն, որն ի վիճակի լիներ մարտահրավեր նետել նրան: Այդ տեսակետից իմամ Խոմենյին բախտավոր մարդ էր:

Ահա թե ինչու Իրանի բազմադարյան պատմության մեջ 1979 թ. սկսված ժամանակաշրջանը օրինաչափորեն կոչվում է «Այաթոլլահ Խոմենյիի դարաշրջան»:

* * *

Էական ենք համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել տվյալ թեմայի համար կարևոր մշանակություն ունեցող մի հանգամանքի վրա ևս:

1970–ական թվականների երկրորդ կեսերին Լիբանանում բռնկվեց քաղաքացիական պատերազմ, և վտանգի մեջ հայտնվեց Լիբանանի հայ համայնքը: Դա հիանալի, լավ կազմակերպված, մարդաշատ և Մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ ամուր թելերով կապված համայնք էր, որը ոչ պաշտոնապես համարվում էր Սփյուռքի կենտրոնը: Մյուս կողմից՝ նա, լինելով Լիբանանի պետական կառույցների օրգանական մասը, մեծ դերակատարություն ուներ արաբական այդ երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Քաղաքացիական պատերազմի սկզբին լիբանանահայ համայնքը, նրա բոլոր քաղաքական կուսակցությունները միաձայն որոշում ընդունեցին որ-

ղեզրել դրական չեզոքության քաղաքականություն, որն անվերապահորեն կարելի է համարել իմաստուն որոշում: Դա հնարավորություն տվեց խուսափել քաղաքացիական պատերազմի մեջ ակամայից ներգրավվելուց և կանխել արաբների եղբայրասպան պատերազմի կողքին հայ-արաբական եղբայրասպան պատերազմի առաջացմանը, որը կարող էր կործանարար լինել լիբանանահայ համայնքի համար և շատ ծանր հետևանքներ ունենալ Լիբանանի՝ որպես պետության գոյության համար:

Ընդհանուր առմամբ Լիբանանի բոլոր համայնքներն ընդունեցին հայ համայնքի որդեգրած դրական չեզոքության քաղաքականությունը և հաշվի նստեցին դրա հետ, բացառությամբ քաղաքացիական պատերազմը նախաձեռնող ուժերից մեկի՝ քրիստոնյա մարոնի համայնքի, ի մասնավորին նրա մարտականորեն տրամադրված Լիբանանյան փաղանգներ թևի՝ Պիեռ Ժմայելի և նրա որդիների գլխավորությամբ: Նրանք ձգտում էին իրենց ենթարկել Լիբանանի բոլոր քրիստոնյա համայնքները, այդ թվում և հայ համայնքը, դառնալ Լիբանանի առաջատար ուժն ու Լիբանանի զարգացումը տանել այնպիսի ուղիով, որն առավել համապատասխանում էր այդ հարանվանության շահերին: Իսկ քանի որ հայ համայնքը, հավատարիմ իր դրական չեզոքության քաղաքականությանը, մերժում էր մարոնիների քաղաքական ծրագրերի պաշտպանը դառնալ, ապա վերջիններս գրավեցին թշնամական դիրք հայ համայնքի նկատմամբ: Դեռ ավելին՝ նրանց զինված ուժերը երկու անգամ՝ 1978 և 1979 թթ., հարձակում գործեցին հայ համայնքի վրա, հատկապես Բեյրութում՝ պատճառելով մարդկային զոհեր և նյութական զգալի կորուստներ:

Լիբանանահայության համար այդ ծանր պահերին նրան օգնության ձեռք մեկնեց Խորհրդային Հայաստանը: Այդ օգնության շրջանակներում Լիբանան մեկնեց մի պատվիրակություն, որի կազմում էր և տողերիս հեղինակը՝ հաշվի առնելով Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի վարիչի, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահի, Արաբական երկրների հետ բարեկամության Խորհրդային ասոցիացիայի փոխպրեզիդենտի և ԽՍՀՄ-Լիբանան բարեկամության ընկերության փոխնախագահի իմ հանգամանքները, ինչպես նաև իմ լայն կապերը Լիբանանի արաբական տարբեր քաղաքական ու կրոնական շրջանակների, մտավորականության հետ: Այդ տարիներին ես բազմիցս մեկնել եմ Լիբանան և հանդիպումներ ունեցել Լիբանանի

վարչապետ Ռաշիդ Սուլի, շիա համայնքի հոգևոր առաջնորդ Շամս ադ Դինի, դրուզական համայնքի ղեկավար, Առաջադիմական սոցիալիստական կուսակցության առաջնորդ Վալիդ Ջուբրաթի, շիա համայնքի ղեկավար և «Ամալ» կազմակերպության առաջնորդ Հուսեյն Հուսեյնիի, որը, շատ չանցած, գրադեցրեց Լիբանանի պառլամենտի մախսազահի բարձր պաշտոնը, պաղեստինցիների առաջնորդների և լիբանանյան այլ ազդեցիկ ու հեղինակավոր անձանց հետ: Այդ հանդիպումների ժամանակ քննարկվում էին հայ համայնքի իրավունքների, լիբանանահայությունը մարոնի աջ ուժերի հարձակումներից պաշտպանելու, հայ-լիբանանյան հարաբերությունների հետազա ամրապնդման և այլ կենսական հարցեր: Եվ, ի պատիվ Լիբանանի այդ ուժերի, պետք է ասել, որ նրանք թիկունք կանգնեցին հայ համայնքին՝ կանխելով մարոնիների հետազա ագրեսիվ գործողությունները:

Լիբանան 1978–1979 թթ. իմ այցելությունները, ժամանակի առումով, համընկան Իրանում ծայր առած հակաշահական ելույթներին, որոնք, ի վերջո, հանգեցրին շահական վարչակարգի տապալմանը և, ինչպես ընդունված է պատմագիտական գրականության մեջ, «մուլլոկրատիայի», այսինքն՝ Իրանի կրոնական առաջնորդների իշխանության հաստատմանը իմամ Խոմեյնիի գլխավորությամբ:

Լիբանանյան առաջնորդներից առանձնապես ջերմ հարաբերություններ էին հաստատվել իմ և Հուսեյն Հուսեյնիի միջև, որից փորձեց օգտվել Լիբանանում խորհրդային ղեսպանությունը:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում տալ հետևյալ բացատրությունը: Իմ հանդիպումների ժամանակ ես նկատեցի, որ Հուսեյն Հուսեյնին ինչքան որ ջերմ էր, երբ խոսքը վերաբերում էր լիբանանահայ համայնքին և նրան օգնելուն, նույնքան և սառն էր, երբ խոսքը վերաբերում էր Խորհրդային Միությանը և նրա քաղաքականությանը Իրանի, ավելի կոնկրետ, իր մայրամուտն ապրող շահի վարչակարգի նկատմամբ: Հուսեյն Հուսեյնին հանդիպումներից մեկի ժամանակ ինձ ուղղակի ասաց, որ զարմանում է խորհրդային կառավարության քաղաքականության վրա, որը, կարծես թե, չի նկատում, թե ինչ է կատարվում Իրանում, չի հասկանում, որ շահի օրերը հաշված են, և շարունակում է շահին պաշտպանելու իր նախկին արատավոր քաղաքականությունը: Ընդ որում՝ նա շեշտեց, որ շահի վարչակարգի տապալումն ու իմամ Խոմեյնիի հաղթանակն անխուսափելի է, և եթե Խորհրդային Միությունը շարունակի իր քաղաքական արդեն հնացած գիծը, ապա

շահի տապալումից հետո նա կարող է շատ լուրջ խնդիրներ ունենալ Իրանի նոր ղեկավարության հետ:

Հուսեյն Հուսեյնին խնդրեց ինձ իր այս կարծիքը փոխանցել Բեյրութում խորհրդային դեսպանությանը, որը և ես կատարեցի:

Պետք է նշել, որ Հուսեյն Հուսեյնին իրավացի էր: Խորհրդային ղեկավարությունն իր ոչ ճկուն և անհեռատես քաղաքականությամբ շատ հաճախ չէր կարողանում նկատել նոր երևույթները միջազգային հարաբերություններում, քայլում էր իրադարձությունների պոչից և իրեն դնում անհարմար վիճակում: Դրա փայլուն օրինակն է հանդիսանում Խորհրդային Միության քաղաքականությունը շահի և նրա վարչակարգի նկատմամբ, երբ աշխարհի համարյա բոլոր առաջատար պետությունները փորձում էին հասկանալ Իրանում ծավալված իրադարձությունների իմաստը, դրանց հնարավոր հետևանքները և դրան համապատասխան նոր քաղաքականություն մշակել, խորհրդային ղեկավարությունը շարունակում էր կառչած մնալ հին պատկերացումներից ու քաղաքական հիմնադրույթներին և չէր ցանկանում վերանայել իր քաղաքականությունն Իրանի շահի նկատմամբ, որը դեռևս գտնվում էր Թեհրանում:

Դեսպանությունում ինձ հետ տեղի ունեցած գրույցի ժամանակ, երբ ինձ հարց տրվեց Հուսեյն Հուսեյնի կարծիքի մասին, ես հիմնականում պաշտպանեցի նրա տեսակետը՝ ընդգծելով իմամ Խոմեյնիի մոտալուտ հաղթանակի և նրա՝ Փարիզից Թեհրան վերադառնալու հնարավորության մասին՝ ավելացնելով, որ եթե մինչ այդ Խորհրդային Միությունը չփոխի իր դիրքորոշումը, ապա նա շատ բան կկորցնի և կույճենա ոչ բարեկամական և լարված հարաբերություններ իր հարավային հարևանի հետ:

Այս կապակցությամբ հարց կարող է առաջանալ, թե որքանով էր իրավասու Հուսեյն Հուսեյնին այդպիսի կտրուկ և պատասխանատու հայտարարություններ անել իմամ Խոմեյնիի անունից:

Հուսեյն Հուսեյնին, ինչպես նշեցիք, Լիբանանի շիա համայնքի ամենաազդեցիկ ղեկավարներից էր: Իսկ շիաներն ամբողջ աշխարհում սերտորեն կապված են միմյանց հետ, բացառություն չեն նաև Լիբանանի և Իրանի շիաները: Այդ մասին գրույցներից մեկի ժամանակ ինձ ուղղակի ասաց Հուսեյն Հուսեյնին՝ ավելացնելով, որ իրենք և իր ղեկավարած լիբանանյան շիաների ռազմաքաղաքական «Ամալ» կազմակերպությունն ամեն ինչ ունեն, և որ նրանք դրան, գեներ և նյութական այլ օգնություն ստանում են Իրա-

նի իմամ Խոմենյիի հետևորդ շիաներից, մարտիկները մարզվում են իմամ Խոմենյիի հսկողության տակ գտնվող ճամբարներում և ոչ մի բանի պակաս չեն զգում: Նա բաց տեքստով ինձ տեղյակ պահեց, որ ինքը պատկանում է իմամ Խոմենյիի ամենամերձավոր շրջապատին, որի կորիզը կազմում էին, ըստ նրա խոսքերի, Բանի Սադրը՝ հետագայում ԻԻՀ առաջին պրեզիդենտը, Մուսթաֆա Չամրանը՝ հետագայում ԻԻՀ Հեղափոխական խորհրդի նախագահը և պաշտպանության նախարարը, Իբրահիմ Յազդին՝ ԻԻՀ ապագա առաջին արտաքին գործերի նախարարը, Քուտուբ Չադեն, Թաբաթաբախն և այլն: Այդ փաղանգին էր պատկանում նաև Հուսեյն Հուսեյնին:

Նրանք բարձրագույն կրթություն ստացած, նոր մտածելակերպով օժտված, շահական վարչակարգի նկատմամբ ատելությամբ տոգորված և իմամ Խոմենյիի գաղափարներին նվիրված երիտասարդ քաղաքագետների մի բույլ էին, որը կարևոր դերակատարում ունեցավ իսլամական հեղափոխության նախապատրաստման և իրագործման առաջին փուլում: Ճիշտ է, իսլամական հեղափոխության հաղթանակից հետո նրանցից մի մասի ճամփաները իմամ Խոմենյիի և նրա կրոնական զինակիցների հետ բաժանվեցին, և նրանցից մի քանիսը գրկվեցին իրենց գրաված պետական պատասխանատու պաշտոններից, ոմանք հեռացան Իրանից, իսկ ոմանք էլ իմամ Խոմենյիի հրամանով մահապատժի ենթարկվեցին՝ հաստատելով այն դրույթը, որ հեղափոխությունը խժռում է իր իսկ ծնած գավակներին, սակայն այդ փուլում նրանք միասնական էին և համախմբված էին իրենց անառարկելի առաջնորդ այաթոլլահ Խոմենյիի շուրջը: Հուսեյնին հավաստեց, որ ինքը մշտական կապի մեջ է Ֆրանսիայում գտնվող իմամ Խոմենյիի և վերոնշյալ գործիչների հետ, նրանցից ստանում է համապատասխան տեղեկություններ և հրահանգներ հանգուցային հարցերի վերաբերյալ:

Ահա այս հանգամանքը իրավասու էր դարձնում Հուսեյն Հուսեյնիին անել սկզբունքային բնույթի հայտարարություններ իմամի անունից: Ամենայն հավանականությամբ Լիբանանում խորհրդային դեսպանությունը տեղյակ էր այդ մասին, և այդ պատճառով էլ Իրանի ապագա իշխանավորների հետ կապեր հաստատելու հարցում նրանց ընտրությունն ընկել էր Հուսեյն Հուսեյնիի թեկնածության վրա: Դրանով է բացատրվում նաև դեսպանության որոշումը՝ դիմել իմ օգնությանը Հուսեյն Հուսեյնիի միջոցով անմիջական կապեր հաստատել իմամի և նրա մերձավորագույն շրջապատի հետ:

Դեսպանության խնդրանքով Հուսեյն Հուսեյնիի հետ իմ առաջին հանդիպումից հետո այդ կապը, կարելի է ասել, դարձավ մշտական: Մոտ երեք շաբաթ, համարյա ամեն օր, իսկ երբեմն նաև օրը երկու անգամ, մենք հանդիպում էինք միմյանց հետ: Սովորաբար այդ հանդիպումները տեղի էին ունենում նրա առանձնատանը, որին հաճախ ներկա էին լինում նաև այլ մարդիկ, այդ թվում՝ Փարիզից ժամանած իմամ Խոմենյիի հանձնակատարները:

Հուսեյն Հուսեյնիի սովորաբար իմ հետևից ուղարկում էր երեք «Ջիպ» տիպի մեքենաներ՝ զինված մարտիկներով, որոնք ինձ տանում էին նրա տուն և բանակցություններից հետո վերադարձնում դեսպանատուն կամ հյուրանոց: Դա բացատրվում էր նրանով, որ Բեյրութում քաղաքացիական պատերազմի պատճառով անիշխանականություն էր տիրում: Յուրաքանչյուր համայնք, ամեն մի կուսակցություն և կազմակերպություն ուներ իր զինված ուժերը և իրեն ենթակա քաղերը: Ամենօրյա կրակոցները, բախումները նրանց միջև և մարդկային բազմաթիվ զոհերը սովորական երևույթ էին: Ուստի նախազգուշական միջոցները, զինված մարտիկների ուղեկցությամբ քաղաքի քաղերով տեղաշարժերը պարտադիր էր, թեև դա կյանքի ապահովության ոչ մի երաշխիք չէր տալիս: Ամեն ինչ կարող էր պատահել և պատահում էր:

Իմ առաքելությունը հաջող կատարելու համար մոբիլիզացված էին դեսպանության մի քանի բարձրաստիճան, այդ թվում և հայ աշխատողներ:

Իմ հաղորդած առաջին տեղեկությունները, ըստ երևույթին, մտահոգել էին խորհրդային ղեկավարությանը, որը թեև զգուշորեն, բայց որոշել էր ինչ-որ փոփոխություն մտցնել Իրանի հանդեպ իր քաղաքականության մեջ: Եվ ահա խորհրդային դեսպանության հանձնարարությամբ ես կրկին հանդիպում եմ Հուսեյն Հուսեյնիի հետ և նրան տեղյակ պահում, որ խորհրդային կառավարությունն ակնդետ հետևում է իրադարձությունների զարգացմանը Իրանում, մեծ նշանակություն տալիս բարեկամական հարաբերությունների զարգացմանն Իրանի հետ և պատրաստ է վերանայել իր քաղաքականությունը շահական վարչակարգի և անձամբ շահի նկատմամբ, որն իր համապատասխան արտացոլումը կգտնի իմամ Խոմենյիի նկատմամբ բարյացակամ դիրքորոշում գրավելու մեջ:

Հուսեյն Հուսեյնիին թեև գոհունակությամբ ընդունեց այդ լուրը և շեշտեց, որ ինքն անհապաղ այդ մասին տեղյակ կպահի իմամ Խոմենյիին, միաժամանակ ասաց, որ նման կարևոր քայլերի համար բանավոր հայտարարություն-

ները բավարար չեն: Նա նշեց, որ անհրաժեշտ է, որ խորհրդային կառավարությունը հանդես գա գրավոր համապատասխան հայտարարությամբ:

Հուսեյն Հուսեյնիի պահանջը, իհարկե, ճիշտ էր և լիովին համապատասխանում էր միջազգային պրակտիկային:

Հուսեյն Հուսեյնիի այս ցանկությունը ես փոխանցեցի խորհրդային դեսպանությանը: Երկու օր անց ինձ կրկին հրավիրեցին դեսպանատուն և իմ առջև դրեցին «Իզվեստիա» թերթի վերջին թարմ համարը, որը, ինչպես ինձ ասացին, հենց նոր ինքնաթիռով Մոսկվայից հասցվել էր Բեյրութ՝ Հուսեյն Հուսեյնիին հանձնելու համար: Այնտեղ տպված էր մի ընդարձակ հոդված Իրանի վերաբերյալ, բավականին բացասական գույներով ներկայացված շահի ներքին և արտաքին քաղաքականությունը և համակրանք արտահայտվում այաթոլլահ Խոմեյնիի և նրա զլխավորած հակաշահական շարժման նկատմամբ:

Այսպիսով՝ Մոսկվան, ինչ-ինչ պատճառներով չցանկանալով պաշտոնական հայտարարություն անել, նախընտրել էր թերթում տպագրել հատուկ հոդված և այն ներկայացնել որպես իր պաշտոնական տեսակետ՝ օգտագործելով այն հանգամանքը, որ «Իզվեստիան» համարվում էր Խորհրդային Միության պաշտոնաթերթը: Դեսպանությունում գրույցի ժամանակ ինձ խնդրեցին Հուսեյն Հուսեյնիի հետ հանդիպման ժամանակ շեշտել այդ հանգամանքը: Ըստ երևույթին, դեսպանությունը Մոսկվայից այդպիսի հրահանգ էր ստացել:

Եվ այսպես, «Իզվեստիայի» այդ համարը ձեռքիս, համապատասխան թարգմանությամբ, զնում եմ հանդիպման Հուսեյն Հուսեյնիի հետ և նրան տալու համապատասխան բացատրություններ:

Հուսեյն Հուսեյնին, ինչպես միշտ, ինձ ընդունեց վերին աստիճանի սիրալիք, արաբական բարի սովորությամբ հարցրեց իմ առողջության և ընտանիքի մասին, նույնը ես կատարեցի, ապա առաջարկեց շատ պատվական սուրճ, որն ըմպելուց հետո անցանք գործնական խոսակցության: Այդ պահին բազմաթիվ սենյակներից մեկի դռները բացվեցին, և ներս մտան երեք հոգի, որոնք դարձան մեր հետագա գրույցի մասնակիցները: Հուսեյն Հուսեյնին նրանց ներկայացրեց՝ նշելով, որ նրանցից ոմանք այդ օրն եմ ինքնաթիռով ժամանել Փարիզից՝ այաթոլլահ Խոմեյնիի մոտից: Նրանց մեջ ես նկատեցի բարեկիրթ արտաքինով, ակնոցով և մորուքով մեկին: Դա Մուսթաֆա Չամբանն էր, որը, մեկ ամիս էլ չանցած իման Խոմեյնիի հաղթանակից հե-

տո, դարձավ Իրանի Իսլամական Հանրապետության ամենաազդեցիկ մարդկանցից մեկը՝ զբաղեցնելով պաշտպանության նախարարի, ապա՝ նաև Հեղափոխական խորհրդի նախագահի պաշտոնները:

Ես Հուսեյն Հուսեյնիին փոխանցեցի «Իզվեստիա» թերթը, ներկայացրի նրանում Իրանի վերաբերյալ տպագրված հոդվածի բովանդակությունը՝ համապատասխան մեկնաբանություններով՝ շեշտելով, որ այն պետք է ընդունել որպես խորհրդային կառավարության նոր պաշտոնական դիրքորոշումն առ այն, որ նա պատրաստ է ընդունել և հարգել Իրանի ժողովրդի որոշումը շահական վարչակարգի տապալման և իշխանությունը այաթոլլահ Խոմեյնիին և նրա կողմնակիցներին հանձնելու վերաբերյալ:

Հուսեյնին, Չամրանը և մյուս ներկաները անթաքույց գոհունակությամբ ընդունեցին խորհրդային կառավարության նոր դիրքորոշումը: Հավանաբար նրանք չէին ակնկալում խորհրդային քաղաքականության այդպիսի արագ փոփոխություն՝ ի նպաստ իմամ Խոմեյնիի: Բայց չպետք է մոռանալ, որ այդ օրերին դեպքերն Իրանում այնպիսի արագությամբ էին զարգանում, որ Խորհրդային Միության հապաղումը անկանխատեսելի հետևանքներ կարող էր ունենալ նրա համար: Մոսկվայում վերջապես սկսել էին գիտակցել դա և ավելի արագ գործել:

Այդ օրվա հանդիպման ժամանակ ներկա էր նաև մի երիտասարդ, որին Հուսեյն Հուսեյնին ներկայացրեց որպես շիական հայտնի իմամ, մուսուլմանական աշխարհում մեծ հեղինակություն վայելող Մուսա Սադրի որդի: Մուսա Սադրը դրանից մի քանի ամիս առաջ, շատ խորհրդավոր պայմաններում, անհետացել էր: Լուրեր էին պտտվում, որ այդ գործի մեջ խառն էր Լիբիայի մատը: Հուսեյն Հուսեյնին դիմեց ինձ՝ խնդրելով, որ Խորհրդային Միությունն անհրաժեշտ քայլեր ձեռնարկի և ճնշում գործադրի Լիբիայի վրա իմամ Մուսա Սադրին հայտնաբերելու համար: Նա ինձ ուղղակի ասաց, որ Խորհրդային Միության և Լիբիայի ու նրա առաջնորդ Մուամար Կադաֆիի միջև գոյություն ունեն բարեկամական հարաբերություններ, ուստի միայն ձեր երկիրը կարող է ազդել լիբիական առաջնորդի վրա: Նրա այդ խնդրանքին միացավ նաև Մուսա Սադրի որդին: Առաջ անցնելով ասեմ, որ նրանց խնդրանքը ես փոխանցեցի խորհրդային դեսպանությանը: Թե ինչ եղավ դրանից հետո, ինձ հայտնի չէ, միայն գիտեմ, որ առ այսօր դեռ լրիվ պարզաբանված չեն Մուսա Սադրի անհայտանալու բոլոր հանգամանքները:

Այդ հանդիպման ժամանակ ես կատարեցի մի կարևոր հանձնարարություն ևս: Այն բանից հետո, երբ Հուսեյն Հուսեյնին և մյուսները շնորհակալություն հայտնեցին խորհրդային կառավարությանը նրա նոր դիրքորոշման կապակցությամբ, ես դիմեցի Հուսեյն Հուսեյնիին հետևյալ առաջարկությամբ. «Ի՞նչ կցանկանայիք դուք և իմամ Խոմեյնիին, որ խորհրդային կառավարությունն աներ ձեզ համար»: Նա մի պահ մտածեց և արեց հետևյալ առաջարկությունը իմամ Խոմեյնիի անունից. «Մենք կցանկանալինք, որ, եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները փորձի միջամտել Իրանի ներքին գործերին, ապա Խորհրդային Միությունը կանխեր դա և հանդես գար դրա դեմ՝ ի պաշտպանություն Իրանի սուվերենության»: Ապա մի փոքր պառուգա տալով՝ ավելացրեց. «Եթե Խորհրդային Միությունը դա կատարի, ապա Իրանը կվերացնի նրա տարածքում տեղադրված ամերիկյան ռազմական բազաները, որոնք ուղղված են Խորհրդային Միության դեմ, և Իրանը երբեք զենք չի դառնա ամերիկյան իմպերիալիզմի ձեռքում՝ ընդդեմ Խորհրդային Միության»:

Դատելով այն բանից, որ Հուսեյն Հուսեյնին բավականին արագ պատասխան տվեց իմ հարցմանը և արեց այդպիսի վերին աստիճանի պատասխանատու հայտարարություն, որին միացավ նաև Մուսթաֆա Չամրանը, ապա պետք է ենթադրել, որ այդ առաջարկությունը չձմվեց տվյալ պահին, և նրանք չէին նրա իսկական հեղինակները: Մեզ հավանական է թվում, որ դա նախօրոք իմամ Խոմեյնիի և նրա զինակիցների կողմից մշակված քաղաքական գիծ էր, որ տվյալ պահին առաջին անգամ հնչեց Հուսեյն Հուսեյնիի շուրթերից:

Եվ այսպես, վերադառնում եմ դեսպանատուն՝ վստահ, որ լավ լուր եմ տանում Խորհրդային Միության համար: Սակայն ճանապարհին՝ մեքենայի մեջ, միաժամանակ մտածում էի, թե մեր կառավարությունն ինչպես կընդունի իմամ Խոմեյնիի առաջարկությունը ԱՄՆ-ին հակահարված տալու վերաբերյալ:

Դեսպանության ղեկավարությունն արտակարգ խանդավառությամբ ընդունեց այսթուլլահ Խոմեյնիի անունից տրված երաշխիքներն ամերիկյան ռազմական բազան վերացնելու և հատկապես այն բանի վերաբերյալ, որ Իրանն այլևս զենք չի դառնա ԱՄՆ-ի ձեռքում՝ ուղղված Խորհրդային Միության դեմ:

Դեսպանությունից ես մեկնեցի հյուրանոց՝ ենթադրելով, որ խորհրդային

II
A 89043

կառավարության պատասխանը լավագույնը երկու-երեք օրից շուտ չի ստացվի: Ես Հուսեյն Հուսեյնիին այդպես էլ զգուշացրել էի, որ նման պատասխանատու որոշումները շատ արագ չեն ընդունվում և որոշ ժամանակ են պահանջում: Նա ինձ հետ համամիտ էր:

Սակայն մեծ եղավ իմ զարմանքը, երբ հաջորդ օրվա կեսօրին ինձ հրավիրեցին դեսպանատուն: Երբ ես ներս մտա մեր հանդիպումների համար հատկացված սենյակը, ապա արդեն այնտեղ էր գտնվում դեսպանության շատ մեղ ղեկավար կազմը, որն իրագել էր Հուսեյն Հուսեյնիի հետ իմ հանդիպումներին և բանակցություններին: Հասկանալի է, որ դա խիստ գաղտնի էր պահվում, և, ինչպես նշեցի, շատ սահմանափակ թվով մարդիկ էին տեղյակ բանակցությունների և նրանց բուն առարկայի մասին:

Ինձ անմիջապես ասվեց, որ ստացվել է խորհրդային կառավարության պատասխանը իման Խոմեյնիի վերջին առաջարկությունների մասին, և խնդրեցին, որ ես նոր հանդիպում պահանջեմ Հուսեյն Հուսեյնիից հենց նույն օրը, խորհրդային պատասխանը նրան հանձնելու համար: Ապա դեսպանի խորհրդականն ինձ բանավոր ծանոթացրեց Մոսկվայից ստացված պատասխանի հետ, որը, ինչպես նա հատուկ շեշտեց, պաշտոնական էր: Նա ինձ ասաց, որ ես Հուսեյն Հուսեյնիի միջոցով պետք է այաթոլլահ Խոմեյնիին փոխանցեմ հետևյալը. «Խորհրդային ղեկավարությունը գոհունակությամբ է ընդունում իման Խոմեյնիի խոստումն առ այն, որ նրա իշխանության գալուց հետո կվերանա Իրանում տեղակայված ամերիկյան ռազմական բազան իր բոլոր սարքավորումներով հանդերձ, և որ Իրանը երբեք չի դառնա զենք՝ ուղղված իր հյուսիսային հարևանի՝ Խորհրդային Միության դեմ: Իրանի ներքին գործերին ԱՄՆ-ի ռազմական միջամտության դեպքում Խորհրդային Միությունը պատրաստ է օգնել Իրանին և զինված հակահարված կհասցնի ԱՄՆ-ին»: Ապա տիրեց քար լուրջություն, որի առիթը խորհրդային առաջարկության վերջին մասն էր, որը վերաբերում էր ԱՄՆ-ին զինված հարված հասցնելու կետին: Ես խորհրդականին խնդրեցի նորից կարդալ տեքստը՝ ցանկանալով ստուգել ինձ, արդյո՞ք ճիշտ եմ հասկացել ամերիկացիներին զինված հարված հասցնելու մասը: Նա նույնությամբ կրկնեց ամեն ինչ՝ շեշտելով ռուսերեն «будем бить» («կխփենք», «կհարվածենք») բառերը:

Ես հարցրեցի, թե «խորհրդային ղեկավարություն» ասելով ո՞ւմ նկատի ունի: Նա ինձ պատասխանեց՝ ամենաբարձրագույն: Ես դարձյալ պնդեցի, թե դրա տակ ո՞ւմ նկատի ունի: Նա պատասխանեց. «Կոմունիստական կու-



սակցության Գլխավոր քարտուղար և Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին»:

Ես մինչև հիմա էլ չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես կարողացա ասել, թե ես հրաժարվում եմ գնալ Հուսեյն Հուսեյնիի մոտ և այդ լուրը փոխանցել նրան: Ներկաները բոլորն ապշած նայում էին ինձ՝ սպասելով իմ բացատրությանը: Եվ ես նրանց չստիպեցի շատ երկար սպասել, այլ ուղղակի ասացի հետևյալը. «Դա շատ պատասխանատու հայտարարություն է և կվայելի, որ այն Հուսեյնիին փոխանցի մեկ այլ՝ ավելի բարձրաստիճան պաշտոնական անձ: Ես ընդամենը մի հասարակ արաբագետ եմ, և կարող է նույնիսկ ինձ չհավատան նման պատասխան բերելու համար, որն իր մեջ պարունակում է ԱՄՆ–ին ռազմական հարված հասցնելու, այսինքն՝ ԱՄՆ–ի դեմ պատերազմ սկսելու կետ»: Ներկաները, մեկը մյուսին հերք չտալով, սկսեցին ինձ համոզել, որ իմ մտավախությունն անհիմն է, որ ես նույնիսկ չեմ պատկերացնում, թե արդեն ինչպիսի մեծ և պատասխանատու գործ եմ կատարել, և որ իրենք ունեն հավաստի տվյալներ այն մասին, որ Հուսեյն Հուսեյնին և իմամ Խոմենյիի այլ զինակիցներ մեծագույն հարգանքով ու վստահությամբ են ինձ վերաբերվում և այլն, և այլն: Եվ կարծես թե ամփոփելով բոլոր ասվածները՝ դեսպանի խորհրդակցան ինձ ուղղակի ասաց. «Ընկե՛ր Հովհաննիսյան, հարգելի՛ պրոֆեսոր, Դուք լիազորված եք այդ բոլորը հայտարարել Գլխավոր քարտուղարի, այո՛, այո՛, Գլխավոր քարտուղարի անունից»:

Ի վերջո ես տեղի տվեցի և համաձայնվեցի գնալ Հուսեյն Հուսեյնիի մոտ: Վերջինս անմիջապես դրական պատասխան տվեց իր հետ հենց նույն պահին հանդիպելու իմ առաջարկությանը՝ հավանաբար կռահելով, որ ես նրան շատ կարևոր լուր եմ հաղորդելու: Եվ, ահա, ես նրա տանն եմ: Ես շատ սպասեցնել չտվեցի և անմիջապես դիմելով նրան՝ ասացի. «Պարո՛ն Հուսեյնի, ես լիազորված եմ խորհրդային բարձրագույն ղեկավարության անունից Ձեզ փոխանցել հետևյալ կարևոր հայտարարությունը», և շարադրեցի նրան բառ առ բառ այն ամենը, ինչ վերևում արդեն նշել եմ՝ ավելացնելով, որ խորհրդային կողմը կցանկանար, որ իր այս հայտարարությունն անհապաղ փոխանցվեր իմամ Խոմենյիին:

Հուսեյն Հուսեյնին, որը կլանված լսեց այն ամենը, ինչ ես նրան փոխանցեցի, մի պահ կարծես թե քարացավ և շունչը պահած անթաթթ ինձ էր նայում: Նա, իհարկե, հասկացավ, որ դա պատմական պահ է, որը հեշտացնում

է իմամ Խոմէյնիի վերադարձը Թեհրան և նպաստավոր պայմաններ ստեղծում նրա իշխանության համար: Այնուհետև նա կարծես թէ սթափվեց, մոտեցավ ինձ, ամուր սեղմեց ձեռքս, խորին շնորհակալություն հայտնեց Խորհրդային Միությանը և վստահեցրեց, որ հենց նույն օրը երեկոյան խորհրդային կառավարության այս հայտարարությունը կլինի իմամ Խոմէյնիի սեղանի վրա:

Միաժամանակ նա ինձ տեղյակ պահեց, որ իմամ Խոմէյնիից կրկին ստացվել է մեր մախորդ հանդիպման ժամանակ իմ տված այն հարցի պատասխանը, թե իմամ Խոմէյնին ինչ կցանկանար, որ խորհրդային կառավարությունն աներ նրանց համար: Եվ նա բառ առ բառ, իմամ Խոմէյնիի ամուսնից ասաց այն, ինչ ասել էր ինձ մախորդ հանդիպման ժամանակ, այսինքն՝ Իրանը կվերացնի իր տարածքում գտնվող ամերիկյան ռազմական բազան և երբեք զենք չի դառնա ուրիշի ձեռքում՝ ուղղված Խորհրդային Միության դեմ:

Մնացածը հայտնի է: Դեպքերի զարգացումը իսլամական հեղափոխության հաղթանակի սկզբնական փուլում ըմբացավ համարյա վերոնշյալ սցենարով: Իրանի նոր ղեկավարությունը վերացրեց ամերիկյան ռազմական բազան, պաշտոնապես հայտարարեց, որ Իրանը երբեք զենք չի դառնա ԱՄՆ-ի ձեռքում՝ ուղղված ԽՍՀՄ-ի դեմ և այլն:

Հուսեյն Հուսեյնիի հետ հանդիպումներից մեկի ժամանակ ես որոշեցի նրա հետ խոսել ևս երկու հարցի մասին:

Առաջինը իրանահայերի, որոնք արդեն հեռացել էին Իրանից և հաստատվել Լիբանանում, մտավախությունն էր, որ եթե խմամ Խոմէյնին և նրա կողմնակիցները վերադառնան Թեհրան և իշխանությունը վերցնեն իրենց ձեռքը, ապա նրանց՝ իրանահայերի դեմ կարող են հալածանքներ սկսվել: Նրանք ինձ հետ զրուցել էին այդ մասին Բեյրութում և խնդրել պարզաբանություն մտցնել այս հարցում, և, եթե հնարավոր է, կանխել այդ վտանգը:

Երկրորդը այն մտավախությունն էր, որ Իրանի նոր ղեկավարությունը կարող է դադարեցնել գազի մատակարարումը Հայաստանին, որը նրան կդներ ծանր դրության մեջ:

Ես շատ անկեղծորեն խոսեցի այդ մասին նրա հետ: Հուսեյն Հուսեյնին, ինչպես նաև մեր հաջորդ հանդիպմանը ներկա Մուսթաֆա Չամբանը, ինձ իմամ Խոմէյնիի ամուսնից վստահեցրին, որ այդ մտավախությունը ոչ մի հիմք չունի:

Ավաճի՞ն ավելացնեն, որ ես այդ հարցերը բարձրացրեցի իմ նախաձեռնությամբ՝ առանց դրանք, ըստ ընդունված կարգի, նախօրոք համաձայնեցնելու խորհրդային դեսպանության հետ: Ես այդպես վարվեցի, որովհետև համոզված էի, որ ինձ թույլ չէին տա նման հարցեր քննարկել իմամ Խոմեյնիի ներկայացուցիչների հետ: Եվ ես լավ էի պատկերացնում, թե ինձ ինչ կարող էր սպասել այդ ինքնագլուխ գործունեության համար: Չմոռանանք, որ անցյալ դարի 70–ական թվականներն էին, երբ դեռևս ամենազոր էր խորհրդային պետական մեքենան... Այդուհանդերձ, ես այդ պահին ոչնչի մասին չէի մտածում. իմ միակ մտահոգությունը այդ երկու հարցերի լուծումն էր: Եվ, պետք է ասել, որ իրանական նոր դեկավարությունը հավատարիմ մնաց իր տված երաշխիքներին:

Դատելով այն բանից, որ այդ մասին հետագայում ինձ հետ դեսպանության աշխատակիցներից ոչ ոք չի խոսել՝ պետք է ենթադրել, որ Հուսեյն Հուսեյնին և Մուսթաֆա Չամրանը մեր խոսակցությունը գաղտնի են պահել:

Այդ դեպքերից շատ ժամանակ չանցած՝ ես վերադարձա Երևան: Այստեղ ես հավաստի աղբյուրներից իմացա, որ Խորհրդային Միությունը Իրանի համար այդ ծանր օրերին, հավատարիմ իր տված խոստմանը, զգալի թվով լրացուցիչ զորքեր, հատկապես զրահատանկային ուժեր էր կենտրոնացրել խորհրդային–իրանական սահմանի երկայնքով, Հայաստանի և Նախիջևանի հատվածներում՝ պատրաստ կանխելու ամերիկյան հնարավոր ներխուժումը Իրան:

Տարիներ շարունակ՝ մոտ քառորդ դար, մենք լռել ենք այդ մասին, որին տեղյակ էր մարդկանց միայն մի շատ նեղ կազմ: Մենք առաջին անգամ ենք այս մասին գրում: Խորհրդային տարիներին հնարավոր չէր նման բաներ հրատարակել: Հիմա ժամանակները փոխվել են: Բացի դրանից, այդ դեպքերի որոշ մասնակիցներ, թե՛ իրանական և թե՛ խորհրդային, այլևս չկան: Հիմա ես այն քչերից մեկն եմ, որ եղել է այդ իրադարձությունների կենտրոնում: Ժամանակը գնում է, և անհրաժեշտ է շտապել թղթին հանձնելու այն ամենը, ինչ որ կարևոր է և կարող է հետաքրքրություն ներկայացնել մասնագետների համար ու լույս սփռել պատմական կարևոր իրադարձությունների վրա:

Սույն աշխատության մեջ ընդգրկված են հեղինակի հայերեն, ռուսերեն և անգլերեն 1990–ական թթ. հրատարակված մի շարք ուսումնասիրություն-

ներ, որոնք նվիրված են այսօրվա Խոմեյնիի ֆենոմենին, նրա դերին Իրանի XX դարի 70–90–ական թվականների պատմության ու Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծման մեջ: Մի շարք աշխատություններում քննարկվում են արտաքին քաղաքականության մեջ և մերձավորարևելյան տարածաշրջանում ԻԻՀ նոր քաղաքականության հանգուցային հարցերը: Իսկ որոշ աշխատությունների քննարկման առարկան իմամ Խոմեյնիի դարաշրջանում հայ–իրանական հարաբերությունները և ԻԻՀ–ի և Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերություններն են և այլ հարակից հարցեր:

Դրանց զգալի մասը գրված է իրադարձությունների տաք հետքերով և իր վրա, բնականաբար, կրում է այդ փոթորկոտ ժամանակների շունչը:

I. ԱՅԱԹՈԼԼԱՀ ԽՈՄԵՅՆԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Եթե երբևիցե կազմվելու լինի XX դարի խոշորագույն պետական և քաղաքական գործիչների և հոգևոր առաջնորդների ցանկը, որոնք իրենց խոր դրոշմն են դրել դարիս հոգևոր-քաղաքական կերպարի ձևավորման վրա, ապա այդ ցուցակում իր արժանի տեղը կգրավի մեր հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր և հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ռուհոլլահ Խոմենյին, որի ծննդյան հարյուրամյակը այսօր Իրանի բարեկամ ժողովրդի հետ միասին նշում է նաև հայ ժողովուրդը:

Խոմենյիի հայտնվելը պատմության բեմահարթակում խոշոր երևույթ էր, որն, առանց չափազանցության կարելի է ասել, ցնցեց աշխարհը: Նա մի կողմից առաջ բերեց իր համախոհների ու համակիրների աննախադեպ ցնծությունը, մյուս կողմից՝ խուճապ առաջացրեց արևմտյան երկրներում, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը, շահի տապալումով և իմամ Խոմենյիի իշխանության գլուխ գալով, կորցրեց իր ամենահուսալի դաշնակիցներից և հենարաններից մեկին:

Տագնապի լուրջ պահեր ապրեց նաև մյուս գերտերությունը՝ Խորհրդային Միությունը, որը խորապես մտավախ էր այն կապակցությամբ, թե ինչպիսի արձագանք կգտնեն այաթոլլահի հռչակած սկզբունքները Խորհրդային Միության տարածքում բնակվող մուսուլման ժողովուրդների մեջ:

Այդ մտավախությունն ակնառու կերպով դրսևորվեց խորհրդային կառավարության և Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից 1980 թ. մարտին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում հրավիրված փակ գիտաժողովում՝ նվիրված իսլամի ակտիվացման հարցերին Իրանում շահական ռեժիմի տապալումից և հոգևորականության իշխանության գլուխ գալուց հետո: Գիտաժողովը ղեկավարում էր ակադեմիկոս Եվգենի Պրիմակովը: Նրա աշխատանքներին Հայաստանի պատվիրակության կազմում մասնակցում էր նաև տողերիս հեղինակը: Երկու օր տևած գիտաժողովը ցույց տվեց, որ խորհրդային ղեկավարությունը խորապես մտահոգված էր այն իրողությունից, որ Խոմենյիի գաղա-

փարմերն արդեն ներթափանցում են Միջին Ասիայի հանրապետություններ, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Պովոլժիե, Ալթայի երկրամաս և մուսուլմանաբնակ այլ վայրեր: Եվ մեր առաջ խնդիր էր դրված, թե ինչպես անել, ինչ քայլերի դիմել, որպեսզի կանխենք, ինչպես այն ժամանակ էին ասում, «խլամի ակտիվացումը» և «մուսուլմանական ալիքի բարձրացումը» Խորհրդային Միությունում:

Այսթուլլահ Խոմեյնիի, նրա հայացքների և գործունեության, նրա ֆենոմենի մասին բավական շատ է գրվել: Հրատարակվել է մեծաքանակ գրականություն հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բնականաբար, նաև պարսկերեն և աշխարհի այլ լեզուներով: Եվ դեռ գրվելու են և կգրվեն ապագայում: Գումարվել են բազում գիտաժողովներ, այդ թվում և միջազգային, աշխարհի տարբեր երկրներում: Նրանցում փորձ է արվել լուսաբանել այսթուլլահ Խոմեյնիի կրոնական և քաղաքական հայացքների էությունը, դրանց առաջացման, նպատակների և հաղթարշավի պատճառները: Եվ պետք է ընդունել, որ պատմաբանները, փիլիսոփաները և քաղաքագետները քիչ բան չեն արել այդ խնդիրների պարզաբանման ուղղությամբ:

Սակայն սխալ կլիներ ասել, թե հարցի ուսումնասիրությունը սպառված է, և լիովին պարզաբանված են բոլոր հանգուցային խնդիրները: Գիտության մեջ այդպես չի լինում: Բացի այդ պետք է նկատի ունենալ մի հանգամանք ևս: Ուսումնասիրողներից յուրաքանչյուրն իր տեսակետն է արտահայտել, իր մոտեցումն է ցուցաբերել և օգտագործել է հետազոտման իր մեթոդը, որը չի կարող անվիճելի լինել: Իրենց սեփական տեսակետն արտահայտելու իրավունք հավասարապես ունեն նաև մյուս հետազոտողները:

Օգտվելով այդ իրավունքից՝ ցանկանում ենք ներկայացնել մեր տեսակետը Խոմեյնիի ֆենոմենի վերաբերյալ: Բնականաբար, հմարավոր չէ մի զեկուցման մեջ ընդգրկել այս վիթխարի թեմայի բոլոր հարցերը, ուստի մենք հակիրճ կանդորառնանք ֆենոմենի հայտնության պատճառներին և մի քանի էական կողմերին:

Խոմեյնիի ֆենոմենը հայտնվեց իրանական հասարակության խոր հակասությունների, ավելի ստույգ՝ ընդհանուր ճգնաժամի ֆոնի վրա: Դճնաժամը համակել էր բոլոր ոլորտները՝ պետական ապարատը, տնտեսությունը, սոցիալական համակարգը, թանակը, ոստիկանությունը և անվտանգության ծառայությունը, ներքին և արտաքին քաղաքականությունը: Դժգոհ էին իրանական հասարակության բոլոր խավերը: Սրանից հետևում է, որ ճգ-

նաժամը ոչ թե օջախային էր, որն ընդգրկում էր լոկ այս կամ այն ոլորտը, այլ ամբողջական, կառուցվածքային–համակարգային: Իսկ նման պարագաներում հնարավոր չէր ճգնաժամը հաղթահարել առանձին բարեփոխումների օգնությամբ, որը հաստատվում է հենց Իրանի պատմական փորձով: Մենք նկատի ունենք այսպես կոչված «սպիտակ հեղափոխությունը», որը փորձեց իրականացնել շահական ռեժիմը վերևից, որը, սակայն, հաջողություն չունեցավ և Պահլավիների դինաստիան չփրկեց կործանումից:

Իրանում ծագած համընդհանուր պետական–քաղաքական, սոցիալ–տնտեսական և հոգևոր–մշակութային ճգնաժամը հնարավոր էր հաղթահարել և այդ հինավուրց երկրի զարգացման համար նոր հորիզոններ բացել միայն արժատական կառուցվածքային վերափոխումների միջոցով, որը իրագործեց հոգևորականությունն իր՝ անառարկելի հեղինակություն հանդիսացող առաջնորդի՝ այաթոլլահ Ռուհոլլահ Մուսավի Խոմեյնիի ղեկավարությամբ:

Սակայն, բնականաբար, հարց է առաջանում, ինչու հենց հոգևորականությունը և ինչու հենց Խոմեյնին: Մի՞թե իրանական քաղաքական ասպարեզում չկային այլ ուժեր, որոնք իրենց վրա վերցնեին նման պատմական մի պատասխանատվություն, ինչպես միապետության տապալումը և նոր վարչակարգի հաստատումը: Այդ հարցերի պատասխանը պետք է փնտրել իրանական յուրահատուկ քաղաքական իրողությունների մեջ:

Իրանի քաղաքական դաշտը շատ թույլ էր զարգացած: Չկային լավ կազմակերպված և հեղինակություն ունեցող կուսակցություններ, որոնք ի վիճակի լինեին ոտքի հանելու և իրենց հետևից տանելու հոծ զանգվածներին: Եղած քաղաքական կազմակերպությունները թույլ էին, և շատ սահմանափակ էր նրանց ազդեցության ոլորտը, որը զրկում էր նրանց վերոհիշյալ պատմական առաքելությունն իրականացնելու ունակությունից և կարողությունից: Անկազմակերպ էին բանվորական և գյուղացիական խավերը, թույլ էր իրանական բուրժուազիան, որի մի աչքն անընդհատ շահնշահի կողմն էր՝ նրա բարյացակամությունը շահելու ակնկալությամբ:

Քաղաքական ուժ էր ներկայացնում իրենից բանակը, որը, սակայն, լավ թե վատ, ծառայում էր միապետին: Խիստ ուժեղ էին ազգային անվտանգության ծառայությունների դիրքերը, որոնք ասի ու սարսափ էին տարածում հասարակության մեջ և հավատարմորեն ծառայում Մուհամմադ Ռեզա Պահլավիին:

Կարող ենք ասել, որ Իրանի քաղաքական դաշտը հասունացած չէր և շատ տխուր պատկեր էր ներկայացնում:

Ահա այսպիսի պայմաններում ասպարեզը մնաց Իրանի իսլամական հոգևորականությանը: Նա միակ համազգային–համաիրանական կազմակերպված, կոտ կառույցներ ունեցող ինստիտուտն էր, որը ընդդիմադիր, մույնիսկ ըմբոստ դիրք էր գրավել միապետական ռեժիմի նկատմամբ և պատրաստ էր գնալ մինչև վերջ: Հոգևորականության դերը Իրանում ավանդաբար եղել է մեծ, մա խոր արմատներ է գցել հասարակության մեջ, որին ընդունում և նրա հրահանգները անվերապահորեն կատարում են հասարակության բոլոր խավերը: Այս առումով մա բացառիկ դիրք և ազդեցություն ունեցող համազգային ինստիտուտ է, որը մրցակցությունից դուրս է: Իրանի յուրահատուկ պայմանների բերումով հոգևորականությունը մշտապես, հատկապես մեր դարի 50–60–ական թվականներից սկսած, իրագործում է ոչ միայն զուտ կրոնական, այլև քաղաքական ֆունկցիաներ:

Այս գործոնների շնորհիվ հոգևորականությունը դուրս եկավ պայքարի առաջին գծի վրա և ստանձնեց Իրանի ժողովրդական ամենալայն զանգվածների հակամիապետական շարժման ղեկավարությունը, որն, ի վերջո, պսակվեց հաջողությամբ:

Այդ շարժումը առաջին օրվանից գլխավորեց իմամ Խոմեյնին, որն ուներ իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Նա բնությունից օժտված էր մեծ խելքով, լայն գիտելիքների տեր անձնավորություն էր: Նրա խոսքը և քարոզները աչքի էին ընկնում իրենց հստակությամբ և տրամաբանությամբ:

Նա Ղուրանի և շարիաթի լավագույն գիտակ էր, կարողանում էր իսլամական դոգմաները հաջողությամբ միահյուսել Իրանի առջև կանգնած քաղաքական և սոցիալ–տնտեսական խնդիրների հետ, ցույց տալ նրանց լուծման ուղիները: Ժողովրդի համար հասկանալի լեզվով ասված և առաջ քաշված գաղափարները մոգական ազդեցություն էին գործում միլիոնավոր մարդկանց վրա, որոնք պատրաստ էին մինչև մահ հետևելու իրենց սիրելի այսթղլախին:

Խոմեյնին մեծ ազդեցություն ձեռք բերեց շնորհիվ իր քաղաքական խիզախության, երբ բացահայտ կերպով հակադրվեց շահին և նրա վարած քաղաքականությանը, որն իր նախադեպը չունեցող երևույթ էր ամբողջատիրական վարչակարգի պայմաններում: Վախենալով ձեռք բարձրացնել այսթղլախի կյանքի վրա՝ շահը բավարարվեց նրան արտաքսելով, որը, սակայն, էլ ավելի բարձրացրեց Խոմեյնիի հեղինակությունը: Գունվելով աքստում՝ Իրաքի ան Նաջաֆ քաղաքում, որը շիիզմի համաշխարհային կարևոր

կենտրոններից է, Խոմեյնին չհաշտվեց այդ պատժի հետ և չադերսեց միապետի ներողամտությունը, ինչպես հաճախ է լինում մյան դեպքերում: Ընդհակառակն, նա հեռվից հեռու, ուշիուշով հետևելով իրադարձությունների զարգացմանը, ավելի համոզված և ավելի ուժեղ կերպով շարունակեց պայքարը շահի կառավարման և այն արժեքների դեմ, որ հաստատվել էին վերջինիս թագավորության ժամանակաշրջանում:

Էմիրգրացիայի տարիներին իմամ Խոմեյնին վերջնականապես մշակեց ապագա Իրանի՝ իր քաղաքական հայեցակետը նրա ապագա կառուցվածքի վերաբերյալ, որն այնուհետև նա դրեց իր քաղաքականության հիմքում՝ որպես Իրանի հոգևոր առաջնորդ:

Շնորհիվ այս հատկանիշների՝ Խոմեյնին դարձավ Իրանի հակամիապետական շարժման առաջին դեմքը, շարժման անվիճելի ղեկավարը, որին ընդունում էին ոչ միայն միլիոնավոր մարդիկ, այլև մյուս բոլոր հեղինակավոր այաթոլլահները: Նա դարձավ առաջինը հավասարների, այսինքն՝ այաթոլլահների մեջ և իր վրա վերցրեց միապետությունը տապալելու և իսլամական հանրապետություն հիմնելու դժվարագույն պատմական առաքելությունը:

Խոմեյնիի ֆենոմենը ճիշտ ըմբռնելու համար հարկ է անդրադառնալ դրա հետևյալ չորս էական կողմերի լուսաբանմանը:

Առաջին. արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերի բլոկը:

Շահական ռեժիմը Իրանը դարձրել էր ԱՄՆ-ի հուսալի հենարանը Սերժավոր և Միջին Արևելքում: ԱՄՆ-ը շահին դարձրել էր իր կամակատարը և օգտագործում էր նրան իր ծավալապաշտական ստրատեգիական ծրագրերի իրագործման համար: Գա նվաստացուցիչ էր Իրանի համար, մի պետության, որը պատմության ընթացքում բազմիցս առաջատար դեր է կատարել մեր տարածաշրջանում և ինքնուրույնաբար տնօրինել իր քաղաքական և շատ հաճախ նաև այլ երկրների և ժողովուրդների ճակատագիրը:

Շահի արտաքին քաղաքական կուրսը, ժանդարմի ֆունկցիաներ կատարելը և ԱՄՆ-ի կամակատար լինելը առաջ էր բերել Իրանի ազգային-հայրենասիրական ուժերի խոր դժգոհությունը և վրդովմունքը: Այդ քաղաքականության փոփոխությունը դարձավ կարևոր խթան Խոմեյնիի և նրա համախոհների համար շահական ռեժիմը և միապետությունը տապալելու գործում: Գալով իշխանության գլուխ՝ Խոմեյնին անմիջապես հայտարարեց, որ Իրանը երբեք զենք չի լինի ամերիկյան իմպերիալիստների ձեռքում՝ ուղղված այլ ժողովուրդների դեմ: Այս բանաձևը խիստ կարևոր է Խոմեյնիի ֆե-

նոմենն ըմբռնելու և գնահատելու-տեսանկյունից: Իրանի Իսլամական Հանրապետության նոր արտաքին քաղաքական կուրսը, որը պաշտպանություն գտավ Իրանի տարբեր սոցիալ-հասարակական ուժերի կողմից, փոխեց ուժերի հավասարակշռությունը և ստեղծեց նոր աշխարհաքաղաքական իրադրություն, որն ի նպաստ ԱՄՆ-ի չէր:

Երկրորդ, ներքին քաղաքական հարցերի բլոկը: Իրանում խոր դժգոհություն էր կուտակվել շահի ներքին քաղաքականության հանդեպ: Խոսքն այստեղ միայն սոցիալական բևեռացման և սոցիալ-տնտեսական դժվարությունների մասին չէր, այլ արևմտյան արժեքների ներդրման, վեստերնիզացիայի և նրանց կողմից իրանական ավանդական արժեքների դուրսնղման մասին: Վեստերնիզացիայի հեղեղը, որը ներխուժել էր Իրան շահի կառավարման հատկապես վերջին տարիներին, խաբխուրում էր իրանական ավանդական կառույցները, սովորույթները, կենցաղը, մարդկային և ընտանեկան հարաբերությունները: Իրանցին հոգեբանորեն ոչ միայն պատրաստ չէր դրան, այլև մերժում էր իր ազգային արժեքներն իր համար խորք արևմտյան արժեքներով փոխարինելու միտումները:

Գա դարձավ շահի ռեժիմից իրանցիների երես թեքելու գլխավոր պատճառներից մեկը: Իսկ իման Խոմեյնին, որն իր ձեռքը մշտապես պահում էր ժողովրդի զարկերակի վրա, ազգային ավանդական արժեքների պահպանումը և Իրանի վեստերնիզացիայի դեմ պատռեչ կառուցելը դարձրեց իր քաղաքականության կռվաններից մեկը, որը կազմում է Խոմեյնիի ֆենոմենի մյուս էական բաղադրատարրը:

Հասկանալի է, որ Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծումով այլևս տեղ չէր մնում Իրանի վեստերնիզացիայի համար, իսկ իրանական ավանդական հոգևոր-մշակութային և կրթական արժեքները ձեռք բերեցին հուսալի տանիք:

Երրորդ, Խոմեյնիի ֆենոմենի երրորդ բաղադրատարրը Իրանի զարգացման ուղու ընտրությունն է:

Այսօրվա Խոմեյնին սկզբից ևեթ մերժում էր զարգացման արևմտյան, կապիտալիստական ուղին՝ գտնելով, որ դա չի կարող երջանկություն բերել մարդուն և չի համապատասխանում իրանցիների պատկերացումներին:

Սակայն նա ժխտական դիրք գրավեց նաև զարգացման սոցիալիստական, մասնավորապես՝ նրա խորհրդային մոդելի նկատմամբ: Խոմեյնիի կարծիքով՝ սոցիալիզմը, հակառակ բազում դեկլարացիաների, նույնպես ի

վիճակի չեղավ մարդուն երջանկություն պարզելու: Իսկ Խորհրդային Միությունում հաստատված ամբողջատիրական վարչակարգը, մանավանդ ստալինյան բռնատիրական վարչակարգը, որը տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց զոհվելու պատճառ հանդիսացավ, մեծապես հարված էր հասցրել սոցիալիզմին և վարկաբեկել այն՝ որպես հասարակական ֆորմացիա:

Ժխտելով զարգացման թե՛ կապիտալիստական և թե՛ սոցիալիստական ուղիները՝ Խոմեյնին առաջադրեց իր մոդելը, որը խարսխված է իսլամի հիմնարար և անաղարտ սկզբունքների վրա: Այդ մոդելի մարմնավորումը հանդիսացավ Իրանի Իսլամական Հանրապետությունը:

Չորրորդ. Խոմեյնիի ֆենոմենի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ ազգային-էթնիկական և ոչ իսլամական փոքրամասնությունների խնդրին:

Խոմեյնին, լինելով մեծ քաղաքագետ, լավ էր հասկանում, որ իր քաղաքականության և իր առաջադրած մոդելի մասին մարդիկ գաղափար կկազմեն՝ ելնելով նաև այն քաղաքականությունից, որ Իրանի նոր իշխանությունները կորդեգրեն Իրանի ոչ պարսիկ ազգաբնակչության նկատմամբ: Բացի դրանից, ազգային փոքրամասնությունների նկատմամբ ճիշտ քաղաքականությունը սերտորեն առնչվում է Իրանի ներքաղաքական կայունության խնդրի հետ: Ուստի իմամ Խոմեյնին հռչակեց Իրանում բնակվող բոլոր ազգությունների իրավահավասարության և կրոնական կոնֆեսիաների ազատության մասին, եթե նրանք գործեն սահմանադրության շրջանակներում: Անձամբ Խոմեյնին շատ ուշադիր էր ազգային փոքրամասնությունների պահանջների նկատմամբ, մերժում էր նրանց նկատմամբ որևէ բռնության կիրառումը և նրանց դիտում էր որպես մեկ միասնական ընտանիքի գավակներ:

Կցանկանայինք վերոնշյալը փաստել Խոմեյնիի՝ իրանահայերի նկատմամբ որդեգրած դիրքորոշմամբ՝ հենվելով մեր անձնական փորձի վրա:

1979 թ. հունվար ամիսն էր, երբ տողերիս հեղինակը, որպես Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ՝ գտնվում էր Լիբանանում, որտեղ ընթանում էր քաղաքացիական պատերազմ, և վտանգի էր ենթարկված նաև լիբանանահայ համայնքը: Մեր նպատակն էր անհրաժեշտ օգնություն կազմակերպել հայ համայնքին և չեզոքացնել այն ուժերին, որոնք ճնշում էին գործադրում դրական չեզոքություն որդեգրած լիբանանա-

հայ համայնքի վրա: Դա իրանական հեղափոխության վաղորդայնին էր: Բեյրութում և Լիբանանի այլ վայրերում կուտակվել էին զգալի թվով իրանահայեր, որոնք Իրանում ստեղծված անկայուն ու տագնապալի վիճակի պատճառով հեռացել էին Իրանից՝ լքելով իրենց տները, կայքն ու ունեցվածքը: Նրանց մեջ տարածվել էին լուրեր, որ եթե շահը տապալվի, և իշխանությունն անցնի նոր ուժերի ձեռքը, ապա նրանք կարող են վատ վերաբերվել հայերին, հալածանքի ենթարկել նրանց և բռնագրավել նրանց գույքը: Մենք համոզված ենք, որ այդ ստահող լուրերը տարածվում էին շահի կողմնակիցների կողմից՝ նպատակ ունենալով հայերին օգտագործել ընդդեմ Խոմեյնիի կողմնակիցների, հակադրել նրանց միմյանց և շիկացնել առանց այն էլ գերլարված մթնոլորտը:

Իրանահայերը շատ մտահոգ էին, և նրանց ներկայացուցիչներն ինձ դիմեցին խնդրանքով. արդյոք հնարավոր չէ՞ պարզություն մտցնել այս հարցի մեջ և իմանալ Խոմեյնիի և նրա կողմնակիցների մասին: Ճիշտն ասած, ես նույնպես մտահոգվեցի և խոստացա նրանց՝ ինչ—որ բան անել:

Ես իմ այդ մտահոգության մասին տեղյակ պահեցի Լիբանանի շիա համայնքի իմ բարեկամներին, որոնք պետական բարձր դիրքեր էին զբաղում Լիբանանում: Նրանք խոստացան իմ մտահոգությունը փոխանցել Խոմեյնիին: Լիբանանի շիա համայնքի ղեկավարներն այդ ժամանակ չէին քաջցնում իրենց կապերը Խոմեյնիի հետ, որ դեռևս գտնվում էր Փարիզում և չէր վերադարձել Թեհրան, և բացեիբաց խոսում էին Խոմեյնիի հանդեպ իրենց համակրանքի և այն օգնության մասին, որ նրանք ստանում էին ալյաթլահից: Նրանք միաժամանակ խոստացան հնարավորության դեպքում կազմակերպել իմ հանդիպումը Խոմեյնիի որևէ ազդեցիկ մերձավոր օգնականի հետ:

Եվ, իրոք, այդ հանդիպումը կայացավ 1979 թ. հունվարի վերջին Բեյրութում Լիբանանի շիա համայնքի ակաճավոր ղեկավարներից մեկի (հետագայում՝ Լիբանանի խորհրդարանի նախագահ, որը երկրորդ դեմքն է Լիբանանի պետական աստիճանակարգում) և «Ամալ» ռազմաքաղաքական կազմակերպության ղեկավար Հուսեյն Հուսեյնիի բնակարանում: Հանդիպման եկածը Խոմեյնիի երիտասարդ կուսակից Մուսթաֆա Չամրանն էր, որը շատ չանցած՝ Խոմեյնիի իշխանության գլուխ գալուց հետո, դարձավ Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարարը, ապա՝ նաև Հեղափոխական խորհրդի նախագահը: Մեր զրույցն անցավ շատ բարեկամական

մթնոլորտում, որի ընթացքում նա ինձ հայտնեց, որ այաթոլլահին տեղյակ է պահվել իրանահայերի մտահոգության մասին: Այնուհետև նա ինձ փոխանցեց Խոմէյնիի հետևյալ բառերը, որը ես դեռևս այն ժամանակ, թարմ հիշողությամբ անմիջապես գրի եմ առել. «Մենք խոր հարգանք ենք տալիս տաղանդավոր հայ ժողովրդի նկատմամբ: Մենք լավ ծանոթ ենք հայ ժողովրդի պատմությանը, այդ թվում և 1915 թ. հայոց ցեղասպանությանը: Իրանն այն երկիրը չէ, և պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայերի գլխին նոր ցեղասպանություն կազմակերպեն: Ես լրիվ երաշխավորում եմ հայերի ապահովությունը՝ որպես Իրանի արժանավոր և իրավահավասար քաղաքացիներ»:

Այաթոլլահ Խոմէյնիի այս հեղինակավոր կարծիքի մասին ես հայտնեցի իրանահայերին, որոնց ուրախությանը չափ ու սահման չկար: Եվ, իրոք, կարող ենք ասել, որ այաթոլլահը եղավ իր խոստման տերը, և հայերի կյանքի ու գործունեության համար ապահովվեցին բոլոր այն պայմանները, որոնք արձանագրված են Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության մեջ:

Այսօր, նշելով այաթոլլահ Ռուհոլլահ Խոմէյնիի ծննդյան հարյուրամյակը և արժանին մատուցելով նրա հիշատակին, միաժամանակ, առիթից օգտվելով, ցանկանում եմ մեր երախտագիտության խոսքն ուղղել Իրանի Իսլամական Հանրապետությանը, որն օգնության ձեռք մեկնեց տնտեսական ծանր պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետությանը, որը տնտեսական շրջափակման էր ենթարկվել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Շնորհիվ այդ աջակցության՝ Հայաստանը ելք ունեցավ դեպի արտաքին աշխարհի և կարողացավ մեղմացնել անցման շրջանի և շրջափակման բացասական հետևանքները: Համոզված ենք, որ բարեկամական հարաբերությունները, որ հաստատվել են Հայաստանի Հանրապետության և իմամ Խոմէյնիի գաղափարների մարմնացումը հանդիսացող Իրանի Իսլամական Հանրապետության միջև, ոչ միայն կպահպանվեն, այլև կզարգանան և կխորանան՝ ընդգրկելով համագործակցության նոր ոլորտներ:

«ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆԻ-100. Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ և հիմնադիր իմամ Խոմէյնիի մտքերի և հայացքների բննարկմանը նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու»:

Երևան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, 1 հոկտեմբերի, 1999 թ., էջ 11-19:

II. ՄԻ ԳՐՎԱԳ ՀԱՅԵՐԻ ՀԱՆԳԵՊ ԱՅԱԹՈԼԼԱՀ ԽՈՄԵՅՆԻ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԻՑ

Իրանում 1979 թ. շահական վարչակարգի տապալումը և իսլամական հեղափոխության հաղթանակը դասվում է 20-րդ դարի կարևոր քաղաքական իրադարձությունների շարքը: Դրա շնորհիվ կտրուկ փոխվեց իրադրությունը Մերձավոր և Միջին Արևելքում, և ստեղծվեց ուժերի նոր հաշվեկշիռ: Միանգամայն բնական պետք է համարել այն հետաքրքրությունը, որ ցուցաբերում է հայ ժողովուրդը իր անմիջական հարևաններից մեկի՝ Իրանի նկատմամբ, որի հետ տարաբնույթ հարաբերությունները դարավոր պատմություն ունեն: Այդ հետաքրքրությունն առավել տեղին է մեր օրերում, երբ անկախ զարգացման ուղին ընտրած Հայաստանի Հանրապետության առջև ծառայել է իր անմիջական և մերձակա հարևանների հետ պետական մակարդակով հարաբերություններ հաստատելու հույժ կարևոր խնդիրը: Մեր կարծիքով՝ դրան կնպաստի, այդ դժվար խնդրի լուծման համար բարենպաստ բարոյաքաղաքական մթնոլորտ կստեղծվի, եթե հասարակայնությանը իրազեկ պահվի և նրա սեփականությունը դառնա այն բոլոր դրականը, որ եղել է և կա երկու դարավոր հարևանների՝ Իրանի և Հայաստանի միջև: Այդ առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հակաշահական պայքարի առաջնորդ և Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր և հոգևոր ղեկավար այաթոլլահ Ռուհոլլահ Խոմենիի դիրքորոշման պարզաբանումը հայերի համար խիստ կարևոր մի հարցում, որին մենք հանգամանքների բերումով որոշ առնչություն ենք ունեցել: Եվ թող ների ընթերցողը, եթե մի փոքր հեռվից սկսենք:

Պատմությունը հետևյալն է:

1978 թ. հոկտեմբերին, երբ դեռևս 1975 թ. Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմը հասել էր իր բարձր լարվածությանը, լիբանանյան աջ ուժերը ուղղակի ճակատային հարձակում սկսեցին լիբանանա-

հայ համայնքի վրա, որը որդեգրել էր դրական չեզոքության քաղաքականություն: Հարձակման նպատակն էր ստիպել հայ համայնքին հրաժարվել այդ քաղաքականությունից, միանալ աջ ուժերին և հակադրվել հակառակ խմբավորմանը, որը հղի էր շատ մեծ վտանգներով: Այդ հարձակման հետևանքով հայերն ունեցան մարդկային զոհեր և կրեցին զգալի նյութական վնասներ: Լիբանանի հայ համայնքի գոյության համար ստեղծվեց շատ ծանր դրություն:

Իրավիճակին ծանոթանալու և լիբանանահայությանն անհրաժեշտ օգնություն ցույց տալու նպատակով Հայաստանի կառավարության որոշմամբ 1979 թ. հունվարին Լիբանան մեկնեց մի պատվիրակություն, որի կազմում էր նաև տողերիս հեղինակը: Պատվիրակությունը հաջողությամբ լուծեց իր առջև դրված խնդիրները: Բավական է նշել, որ մեկ ամսվա ընթացքում Հայաստանից Բեյրութ ուղարկվեց մոտ 30 տրանսպորտային ինքնաթիռ, որը տուժածներին հասցրեց պարեն, հագուստ, դեղորայք և անհրաժեշտ այլ իրեր:

Այդ աշխատանքներին զուգահեռ, ինձ՝ որպես Արաբական երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի խորհրդային ընկերության փոխնախագահ և Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահի վրա դրված էր Լիբանանի արաբական տարբեր շրջանակների հետ հանդիպումներ ունենալու պարտականությունը՝ նպատակ ունենալով բարենպաստ քաղաքական մթնոլորտ ստեղծել Լիբանանի հայ համայնքի համար: Մենք, ոչ առանց հիմքի, մտավախություն ունեինք, որ զինված հարձակումը հայ համայնքի վրա կարող է կրկնվել, ուստի անհրաժեշտ էր մոբիլիզացնել լիբանանյան հասարակայնությունը, նրա առողջ ուժերին և ապահովել նրանց աջակցությունը հայ համայնքին: Այդ առաքելությունը կատարելիս հանդիպումներ ունեցա Լիբանանի նախկին վարչապետ և սուննի համայնքի ճանաչված ղեկավար Ռաշիդ Մոլիի և Առաջադիմական սոցիալիստական կուսակցության առաջնորդ Վալիդ Ջումրատի, Լիբանանի՝ թվաքանակով ամենամեծ շիա համայնքի և նրա ռազմաքաղաքական «Ամալ» կազմակերպության ղեկավար Հուսեյն Հուսեյնիի, ինչպես նաև Պաղեստինի ազատագրական կազմակերպության, որի շտաբ-կայանը գտնվում էր Բեյրութում, ղեկավարության հետ: Նրանք բոլորը խստորեն դատապարտեցին լիբանանյան աջերի հարձակումը հայ համայնքի վրա՝ քննադատելով այն որպես ավազակային և ամոքալի, ընդգծելով իրենց հարգանքը հայ համայնքի նկատմամբ, նշելով, որ դա Լիբանանի օրինական և շատ օգտակար

համայնքներից մեկն է, և պատրաստակամություն հայտնեցին հարկ եղած դեպքում հայ համայնքին ցույց տալ անհրաժեշտ օգնություն:

Ահա այդ օրերին էր՝ 1979 թ. հունվարի վերջերին և փետրվարի սկզբներին, որ խաղարկվում էր իրանական քաղաքական դրամայի եզրափակիչ փուլը: Օրերից մի օր ինձ հրավիրեցին Բեյրութում խորհրդային դեսպանություն: Եվ այստեղ պարզվեց, որ չնայած այն հանգամանքին, որ Իրանի շահ Մուհամմադ Ռեզա Պահլավին արդեն հեռացել էր երկրից, շահական վարչակարգը հոգեվարք էր ապրում, և այաթոլլահ խոմենյիի վերադարձը Փարիզից ու հաղթական մուտքը Թեհրան միայն օրերի հարց էր, խորհրդային կառավարությունը շարունակում էր կողմնորոշվել դեպի շահը և ոչ բարյացակամ դիրք էր գրավում նրա հակառակորդների, նրա դեմ ուղղված շարժումների նկատմամբ: Սա խորհրդային անհեռատես, անիրատես, ոչ ճկուն և քարացած արտաքին քաղաքականության ամենափայլուն դրսևորումներից մեկն էր:

Այժմ, երևի արդեն ըմբռնելով, որ հասել էր շահական ռեժիմի գոյության վերջին ժամը, և ապահովված էր խոմենյիի իշխանության գլուխ անցնելը, խորհրդային կառավարությունը հապշտապ քայլերի էր դիմում, թեկուզ և մեծ ուշացումով, դրությունը ինչ-որ շափով շտկելու համար:

Խորհրդային դեսպանության բարձրատիճան պաշտոնյաները ինձ խնդրեցին դիմել շիա համայնքի և «Ամալ» կազմակերպության ղեկավար Հուսեյն Հուսեյնիին և նրա միջոցով պարզաբանել, թե արդյոք հնարավոր չէ շփումների մեջ մտնել այաթոլլահ խոմենյիի հետ և իմանալ, թե նա ինչ ակնկալիքներ ունի Խորհրդային Միությունից:

Այստեղ հարց է ծագում, թե ինչո՞ր դիմել հասկապես Հուսեյն Հուսեյնիին և ինչո՞ր իմ միջոցով: Նախ պատասխանեմ վերջին հարցին: Դեսպանությանը հայտնի էր, որ նա, Լիբանանի հայ համայնքի ճակատագրով մտահոգված, արդեն հանդիպել էի Հուսեյն Հուսեյնիի հետ: Նրան հայտնի էր նաև, որ «Ամալի» ղեկավարը բարյացակամ վերաբերմունք ուներ իմ նկատմամբ, որի արտահայտությունն էր նրա դրական դիրքորոշումը լիբանանահայ համայնքի նկատմամբ:

Իսկ այդպիսի լուրջ հարցեր բննարկելիս այս հանգամանքը բնավ էլ երկրորդական չէ: Բացի այդ, իմ դիտարկումները ցույց էին տալիս, որ դեսպանությունը ինքն այդ պահին դեռևս մոտ շփումների մեջ չէր խոմենյիի հետ:

Իսկ թե ինչու դեսպանությունը դիմեց Հուսեյն Հուսեյնիի օգնությանը, ա-

պա դա պետք է բացատրել երկու հանգամանքով: Առաջին՝ նա, ինչպես արդեն նշել ենք, Լիբանանի շիա համայնքի ազդեցիկ ղեկավարներից էր: Իսկ Լիբանանի շիա համայնքը սերտորեն կապված էր Իրանի հետ, որտեղ բնակչության ճնշող մեծամասնությունը նույնպես դավանում է շիիզմ: Իսկ այսթուլլահ Խոմեյնին շիա հոգևորականության առաջնորդն էր, իմամը, և նրա իշխանության գլուխ անցնելու դեպքում շիիզմը փաստորեն դառնալու էր պաշտոնական պետական կրոն: Եվ խորհրդային դեսպանությունում մտածում էին օգտվել Լիբանանի սերտ կապերից:

Երկրորդ հանգամանքն այն էր, որ Հուսեյն Հուսեյնին այսթուլլահ Խոմեյնիի խորհրդատուների, նրա քաղաքական շրջապատը կազմող իրանական նոր ու համեմատաբար երիտասարդ գործիչների մերձավորագույն գործընկերներից էր, որոնք գրավեցին բարձրագույն պետական պաշտոններ Խոմեյնիի հաղթանակից հետո: Մենք նկատի ունենք Իրանի առաջին նախագահ Բանի Սադդին, պաշտպանության նախարար Մուսթաֆա Չամրանին, արտաքին գործերի նախարար Իբրահիմ Յազդին, Քուրբուջադեհին, Թաբաթաբեիին և ուրիշների: Նրանցից շատերը հաճախ, երբեմն երկար ժամանակով, լինում էին Լիբանանում, հանդիպում Հուսեյն Հուսեյնիի և շիա համայնքի այլ ղեկավարների հետ և միմյանց ցույց տալիս անհրաժեշտ օգնություն:

Ես մի շարք հանդիպումներ ունեցա Հուսեյն Հուսեյնիի հետ նրա բնակարանում: Ջրույցներին մշտապես մասնակցում էին Խոմեյնիի ներկայացուցիչները, որոնք հատուկ այդ նպատակով գալիս էին Թեհրանից, անգամ Ֆրանսիայից, որտեղ դեռևս գտնվում էին Խոմեյնին և նրա թիմը: Այժմ տեղը չէ մանրամասնորեն պատմել այդ բանակցությունների մասին, սակայն կարող եմ նշել, որ երկարատև ու դժվարին զրույցներից հետո ձևակերպվեցին այսթուլլահ Խոմեյնիի պահանջները Խորհրդային Միության նկատմամբ: Նա պահանջում էր, որ Խորհրդային Միությունը հստակորեն և վճռակաճորեն հայտարարի, որ այլևս չի պաշտպանի և որևէ աջակցություն ցույց չի տա շահին և նրա կողմնակիցներին, կհարգի Իրանի ինքնիշխանությունը և չի միջամտի նրա ներքին գործերին, բոլոր միջոցներով կխոչընդոտի ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ որևէ ագրեսիվ գործողություն և այլն: Դրա դիմաց նա խոստանում էր վերացնել ամերիկյան ռազմական բազաներն Իրանում և հավաստիացնում էր, որ Իրանն այլևս չի լինի ատրճանակ ԱՄՆ-ի ձեռքում՝ ուղղված ԽՍՀՄ-ի դեմ: Այս բոլորը դեսպանու-

քյան միջոցով փոխանցվեց խորհրդային ղեկավարությանը, որն անմիջապես արձագանքեց դրան և մեծ գոհունակությամբ ընդունեց իման խոմեյնիի առաջարկությունները:

Հուսեյն Հուսեյնիի հետ ունեցած հանդիպումներից մեկի ժամանակ իմ նախածնունդով շրջափակվեց Իրանի հայերի ճակատագրի հարցը՝ այաթոլլահ Խոմեյնիի իշխանության գլուխ գալու դեպքում: Այդ հարցը պատահականորեն չբարձրացվեց: Քանի որ այաթոլլահ Խոմեյնիի ամբողջ շարժումն ընթանում էր իսլամի դրոշի ներքո, և Իրանում աննախընթաց կերպով բարձրացել էին կրոնական զգացմունքները, հայերը լուրջ մտավախություն ունեին, որ իրենց գոյության համար կարող են վտանգավոր պայմաններ ստեղծվել: Իրանահայերի մի խավն էլ, հատկապես գործարար շրջանակները, որոնք հանգամանքների բերումով համագործակցել էին շահական վարչակարգի հետ, վախենում էր, որ դրա համար իշխանության գլուխ եկող հակաշահական ուժերը կարող են իրենցից վրեժ լուծել: Շատ հայեր արդեն սկսել էին հեռանալ Իրանից, և Գրանց մի մասը հաստատվել էր Լիբանանում: Նրանց ներկայացուցիչներն ինձ հետ ունեցած հանդիպումների ժամանակ իրենց մտահոգությունը հայտնեցին և հետաքրքրվում էին, թե հայերն, այսինքն՝ Հայաստանի կառավարությունը չի կարող արդյոք որևէ քայլ ձեռնարկել իրանահայերին պաշտպանելու ուղղությամբ: Այս բոլորի մասին ես պատմեցի Հուսեյն Հուսեյնիին: Վերջինս ինձ հավաստիացրեց, որ Իրանի հայերը մտավախության որևէ հիմք չունեն, մանավանդ որ, ինչպես շեշտեց նա, Խոմեյնիի շարժման նպատակն է արդարության հաստատումը և բոլոր ժողովուրդների իրավունքների հարգումը:

Ես հավատացած էի, որ Հուսեյնին իմ կողմից արտահայտված մտահոգության մասին անպայման տեղյակ կպահի այաթոլլահ Խոմեյնիին, և չսխալվեցի: Այդ հանդիպումից մի երկու օր անց՝ 1979 թ. հունվարի վերջերին, Հուսեյն Հուսեյնիի առաջարկությամբ մենք կրկին հանդիպեցինք նրա առանձնատանը: Այստեղ նա ինձ ներկայացրեց մտավորականի տեսքով, մոտրքով և ակնոցով մի համակրելի անձանավորության, որը, ինչպես ընդգծեց Հուսեյն Հուսեյնին, Խոմեյնիի հանձնարարությամբ հատուկ թեհրանից ժամանել էր ինձ հետ հանդիպելու համար: Նրա անունն էր Մուսթաֆա Չամրան, որը, ինչպես արդեն նշվել է, պատկանում էր Խոմեյնիի ամենամերձավոր գործիչների թվին: Խոմեյնիի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո նա գրավեց Իրանի պաշտպանության նախարարի, ապա նաև՝ Հեղափոխա-

կան պաշտպանության խորհրդի նախագահի շատ կարևոր պաշտոնները: Մեր երկարատև գրույցի ընթացքում Խորհրդային Միության և Իրանի ապագա փոխհարաբերությունների վերաբերյալ զանազան հարցերի քննարկումն ինչ հետո Մուսաֆա Չամրանը անդրադարձավ իրանահայության, ավելի ճիշտ՝ նրա մտավախությունների հարցին: Ընդամեն, նա հայտնեց, որ Հուսեյն Հուսեյնին ալաթուլլահ Խոմենյին տեղյակ է պահել այդ հարցի վերաբերյալ ինձ հետ ունեցած գրույցի և իմ կողմից արտահայտված մտահոգության մասին: Այդ հարցը, ինչպես նշեց Մուսաֆա Չամրանը, քննարկվել էր այսպրոլլահ Խոմենյինի և նրա մերձավոր խորհրդականների կողմից, և նրանք լիազորել էին Չամրանին այդ մասին հաղորդել հետևյալը. Խոմենյինի կարծիքով՝ հայերի մտավախությունը ոչ մի հիմք չունի: Նա գտնում էր, որ հայերը Իրանի լիիրավ համայնքներից մեկն են, ունեն իրենց արժանի տեղն Իրանում և օգտակար գործ են կատարում: Հայ համայնքի բոլոր իրավունքները, այդ թվում և կրոնական, կհարգվեն իր կողմից: Այնուհետև Մուսաֆա Չամրանն ընդգծեց, որ թե՛ Խոմենյին և թե՛ իրենք բոլորը շատ լավ ծանոթ են հայ ժողովրդի ողբերգական պատմությանը, այդ թվում և 1915 թ. դեպքերին: Այստեղ ես բառացի մեջբերում եմ Խոմենյինի խոսքերը, որ հաղորդեց Չամրանը. «Իրանն այն պետությունը չէ, իսկ պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայ ժողովրդի նոր ցեղասպանություն կազմակերպեն: Հայերը մեր եղբայրներն են»: Իր կողմից Մուսաֆա Չամրանն ավելացրեց, որ հայերին ինքը շատ լավ է ճանաչում, որ Թեհրանի համալսարանում սովորելիս իր լավագույն ընկերների շարքում շատ հայեր են եղել, հիմա էլ նա շատ լավ հայ բարեկամներ ունի, որոնց մտավոր կարողությունները, նվիրվածությունը, ընկերական հավատարմությունը նա շատ բարձր է գնահատում:

Իմ այն հարցին, թե կարող եմ այսպրոլլահ Խոմենյինի կարծիքի մասին տեղյակ պահել Հայաստանի քնակչությանն ու ղեկավարությանը, Չամրանը պատասխանեց, որ ոչ միայն կարող եմ, այլև դա այսպրոլլահ Խոմենյինի ցանկությունն է: Նա միաժամանակ խնդրեց հավատ չընձայել չարական լուրերի, որոնց նպատակն է հայերի մոտ անվստահություն ստեղծել Իրանի նոր քաղաքական ուժերի և ղեկավարների նկատմամբ: Նա հավաստիացրեց, որ հայերը ոչ մի հիմք չունեն Իրանը լքելու և հեռանալու, որ նրանք կարող են ապահով ապրել և աշխատել իրենց բնակավայրերում:

Մուսաֆա Չամրանի հետ հանդիպման ընթացքում շոշափվեց մի կարևոր հարց ևս՝ Հայաստանին Իրանից գազ մատակարարելու հարցը:

Նկատի ունենալով, որ ԽՍՀՄ-ի և Իրանի նոր ղեկավարության միջև շփումները զտնվում էին իրենց նախնական փուլում և հաշվի առնելով, որ խորհրդային քաղաքականությունը երկար ժամանակ շահամետ բնույթ էր կրել՝ մտավախություն կար, որ խորհրդա-իրանական հարաբերությունները հարթ չէին լինելու, և կարող էին որոշակի բարդություններ առաջանալ տնտեսական համագործակցության ոլորտում, մասնավորապես Խորհրդային Միությանը Իրանի կողմից գազ մատակարարելու բնագավառում: Ըստ գոյություն ունեցող համաձայնագրի՝ Իրանից ստացվող գազի մի մասը մատակարարվում էր Հայաստանին: Ես Մուսթաֆա Չամրանի ուշադրությունը հրավիրեցի այդ հանգամանքի վրա՝ շեշտելով, որ շահական ռեժիմի ժամանակ անխափան կերպով գազ է մատակարարվել Հայաստանին, և այժմ հայերի համար անհասկանալի կլիներ, եթե Իրանի նոր ղեկավարները դադարեցնեին գազի մատակարարումը Հայաստանին:

Մուսթաֆա Չամրանը շատ եռանդուն կերպով ընդգծեց, որ մյան տագնապներն անհիմն են, և հավաստիացրեց, որ Հայաստանի ժողովուրդը կարող է վստահ լինել, որ Իրանը չի դատապարտի նրան տառապելու 1979 թ. խստաշունչ ծնունդը:

Եվ, վերջապես, խոսք գնաց նաև Լիբանանի հայ համայնքի մասին: Արդեն նշել ենք, որ Լիբանանի ամենամեծ շիա համայնքը կապված է Իրանի հետ: Հուսեյն Հուսեյնին մեր հանդիպումներից մեկի ժամանակ ինձ ասել էր, որ իրենք շատ մեծ ֆինանսական, նյութական և ռազմական օգնություն են ստանում Խոմեյնիի կողմնակիցներից: Հետևաբար Լիբանանի շիաների դիրքորոշումը հայ համայնքի նկատմամբ զգալիորեն կախված էր Իրանի նոր ղեկավարությունից: Այդ հանգամանքը նկատի ունեի, երբ շոշափեցի Լիբանանի հայ համայնքի հարցը: Մուսթաֆա Չամրանը շատ ջերմ արտահայտվեց Լիբանանի հայերի մասին, դատապարտեց աջերի ազդեցիվ գործողությունները նրանց նկատմամբ և ընդգծեց, որ Լիբանանի հայ համայնքը լրիվ իրավունք ունի գոյություն ունենալ որպես Լիբանանի ինքնուրույն համայնքներից մեկը: Հուսեյն Հուսեյնին լրիվ հավանություն տվեց Մուսթաֆա Չամրանի կարծիքին, որն, ըստ էության, այաթոլլահ Խոմեյնիի կարծիքն էր և ավելացրեց. «Լիբանանի հայերը մեր եղբայրներն են, իսկ հայ համայնքը Լիբանանի զարդն է»:

Այսպիսով՝ 1979 թ. հունվար-փետրվար ամիսներին այաթոլլահ Խոմեյ-

նի՝ իշխանության անցնելու նախօրյակին մեր կարծիքով շատ կարևոր համաձայնություններ ձեռք բերվեցին հայության իրանական և լիբանանյան հատվածների, նրանց անվտանգության վերաբերյալ:

Բնականորեն հարց է ծագում. ի՞նչ չափով իրանական կողմը, Իրանի նոր ղեկավարությունը հավատարիմ մնաց իր խոստումներին:

1979 թ. ընթացքում Իրանն անխափանորեն գազ մատակարարեց Հայաստանին: Ճիշտ է, հետագա տարիներին գազի մատակարարումը դադարեցվեց, սակայն դա առաջին հերթին կապված էր խորհրդա-իրանական հարաբերություններում ծագած բարդությունների հետ և հատուկ հակահայկական ուղղվածություն չունեց:

Այս տարիների ընթացքում Լիբանանի հայ համայնքի նկատմամբ իր բարեկամական դիրքորոշումը չփոխեց շիա համայնքը: Դեռ ավելին, երբ 1979 թ. սեպտեմբերի 10-13-ը լիբանանյան աջերը իրենց երկրորդ հարձակումը գործեցին հայ համայնքի վրա, շիա համայնքը ամենայն վճռակամությամբ քիկունք կանգնեց հայ համայնքին: Այդ օրերին մենք կրկին գտնվում էինք Բեյրութում և նորից հանդիպեցինք Հուսեյն Հուսեյնիի հետ: Վերջինս վերստին հավաստեց իր կողմից գլխավորվող համայնքի և Իրանի ղեկավարության անփոփոխ բարեկամական դիրքորոշումը հայերի նկատմամբ: Այդ քաղաքականությունը Հուսեյն Հուսեյնին հետևողականորեն կիրառում է մինչ օրս, արդեն որպես Լիբանանի խորհրդարանի նախագահ, որն իր կարևորությամբ նախագահից հետո երկրորդ ղեմքն է Լիբանանի պետական կառավարման բարձրագույն սանդղակարգում:

Իրանի նոր ղեկավարությունը ճանաչեց և հարգեց դարեր ի վեր գոյություն ունեցող հայ համայնքի իրավունքները: Ճիշտ է, երբեմն-երբեմն ծագում էին որոշ բարդություններ, սակայն, ընդհանուր առմամբ, հայ համայնքը պահպանեց իր իրավունքները և տեղը Իրանի ազգային-սոցիալական համակարգում: Դեռ ավելին՝ այս տարիների ընթացքում եղել են դեպքեր, երբ իրանական իշխանությունները վճռակամորեն հանդես են եկել ի պաշտպանություն իրանահայերի: Դրա մասին է վկայում հետևյալ օրինակը:

1980 թ. հունվարին Երևանում էր գտնվում իրանահայերի մի պատվիրակություն, որի ղեկավարը, ամենայն հավանականությամբ, ինչ-որ չափով տեղյակ լինելով իմ հանդիպումների մասին Իրանի նոր ղեկավարների հետ, ցանկություն հայտնեց հանդիպել ինձ հետ: Ես սիրով ընդառաջեցի նրա ցանկությանը և շատ հակիրճ կերպով նրան տեղյակ պահեցի Մուսաֆա

Չամբանի հետ ունեցած իմ գրույցի մասին: Նա ուշադիր լսեց ինձ և այնուհետև պատմեց հետևյալը: 1979 թ. կեսերին կրոնական հողի վրա Թավրիզում, որն Իրանական Ադրբեջանի կենտրոնն է, խիստ ակտիվացել էին ադրբեջանցիները, և նրանց սպառնալիքները ծայրահեղ լարված, նույնիսկ տազնապալի դրությամբ էին ստեղծել տեղի հայության համար: Հայերն արդեն մտածում էին ինքնապաշտպանության մասին: Այդ տազնապալի օրերին Թավրիզի հայկական թաղերն են շրջապատում իրանական հեղափոխության պաշտպանության ջոկատները, որոնք ամսիջականորեն ենթակա էին այաթոլլահ Խոմեյնիին: Նրանք հայերին, նրանց տները և թաղամասերը վերցնում են իրենց պաշտպանության տակ: Ըստ որում, իմամ Խոմեյնին արգելում է որևէ մահմեդականի մտնել հայկական թաղերը և որևէ անհանգստություն պատճառել հայերին: Չենթարկվողները կամ այս կարգադրությունը խախտողները ենթակա էին ամենախիստ պատժի: Այս վճռական գործողությունների հետևանքով Թավրիզի հայությունը որևէ վնաս չկրեց, իսկ հետագայում դրությունը կայունացավ, և անվտանգությունը հայության համար վերահաստատվեց:

Պատվիրակության ղեկավարն ընդգծեց, որ այդ բոլորը երկար ժամանակ առեղծված էր իրենց համար, սակայն այժմ, իմանալով այաթոլլահ Խոմեյնիի դիրքորոշման մասին՝ հայության հանդեպ, որի մուսուլմանները Մուսթաֆա Չամբանն էր, ամեն ինչ պարզ դարձավ:

Այս բոլորը թղթին հանձնելով՝ մենք միայն մի նպատակ ունեինք՝ այն դարձնել պատմության սեփականությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ մեր կողմից նկարագրված դեպքերի մի շարք մասնակիցներ այլևս չկան: Մահացել է այաթոլլահ Խոմեյնին, ավտոմեքենայի պայթյունից զոհվեց Մուսթաֆա Չամբանը, մահապատժի ենթարկվեցին Իբրահիմ Յազդին և Զուբուր Չադեն, քաղաքական ասպարեզից հարկադրված հեռացավ Բանի Մադրը և այլն:

Միաժամանակ մենք այն հույան ենք փայփայում, որ նման փաստերի հրապարակումը, որոնք ամենայն հավանականությամբ միակը չեն, կարող է խթան հանդիսանալ, գուցե նաև հուսալի հիմք՝ պետական մակարդակով հայ-իրանական բարեկամական հարաբերությունների հաստատման և զարգացման համար:

«Հայաստանի Հանրապետություն»
Երևան, 20 օգոստոսի, 1991 թ.

III. ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՔՐԴԱԿԱՆ ՇԵՐՏԸ

Քրդական կոնֆլիկտը դեռևս լրիվ կերպով բացահայտված չէ, կարծես քե թողարկված է և պաշտոնապես միջազգային ճանաչում չի ստացել:

Քրդերին սովորաբար համարում են «Մերձավոր Արևելքի բաժանված ժողովուրդ», որը մասնատված է Թուրքիայի, Իրանի և Իրաքի միջև: Այս հանգամանքը խոր հետք է թողել քրդական հարցի բնույթի վրա՝ դարձնելով այն հակասական շահերի մի բարդ կծիկ:

Քրդական կոնֆլիկտը տիպաբանորեն դասվում է ազգային-տարածքա-յինների շարքը: Այն շոշափում է չորս տարբեր ժողովուրդների՝ մի կողմից՝ քրդերի, մյուս կողմից՝ թուրքերի, պարսիկների ու արաբների (իրաքցիների) շահերը: Այս հանգամանքը ոչ միայն բարդացնում է, այլև նշանակալիորեն իջեցնում իրենց նպատակներին հասնելու քրդերի հնարավորությունները:

Գոյություն չունի համաքրդական քաղաքական կենտրոն, որը հեղինակավոր կերպով ներկայացներ Թուրքիայի, Իրանի և Իրաքի քրդերին, ձևակերպեր համաքրդական պահանջները ու ղեկավարեր նրանց պայքարը դրանց իրագործման համար, ինչպես, ասենք, Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը: Քրդերի բաժանվածությունը, նրանց՝ տարբեր քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններում գտնվելը դժվարացնում է միասնական տակտիկայի և ստրատեգիայի մշակումը, նրանց միավորումը և, առավել ևս, նրանց համատեղ և միաժամանակյա ելույթը բոլոր երեք մասերում:

Շամանակակից փուլում քրդերը ձգտում են իրենց ազգային-տարածքային պահանջները լուծել ազգային ինքնավարության մակարդակով, սովյալ, այսինքն՝ Թուրքիայի, Իրանի և Իրաքի պետական շրջանակներում:

Բայց այդ հարցում ևս քրդերը միանման վիճակում չեն գտնվում: Ինքնավարության համար պայքարում առավել հաջողության են հասել Իրաքի քրդերը, որն արդյունք է նրանց ազգային-քաղաքական մտածողության, կազմակերպվածության և ազգային-ազատագրական շարժման ավելի

քարձր մակարդակի: Եվ, որ շատ կարևոր է, քրդերի իրավունքը՝ ունենալու ազգային, վարչատարածքային ինքնավարություն, պաշտոնապես ճանաչում է Իրաքի կառավարությունը: Նշենք թեկուզ 1970 թ. մարտի 11-ի մանիֆեստը, որով Իրաքի կառավարությունը համաձայնվեց ստեղծել ինքնավար մարզ Էրբիլի և Մուլեյմանիայի մահանգներում: Դա իր ժամանակին ողջունեցին մեծ տերությունները, ՄԱԿ-ը և այլ միջազգային կազմակերպություններ: Այս հանգամանքը նշանակալիորեն հեշտացնում է Իրաքի քրդերի պայքարը հանուն իրական և ոչ դեկլարատիվ ինքնավարության և ստեղծում քարենպաստ միջազգային մթնոլորտ դրա իրագործման համար:

Հարկ է ընդգծել, որ Իրաքի քրդերը ինքնավարություն ստանալու իրական հնարավորություններ ունեն: Ուժերի փոխհարաբերությունն Իրաքում այնպիսին է, որ Իրաքի կառավարությունն ի վիճակի չէ մերժելու քրդերի օրինական ազգային պահանջները: Դրա մասին են վկայում նաև այն բանակցությունները, որ այժմ ընթանում են քրդական ղեկավարների և Իրաքի կառավարության միջև՝ քրդերի ազգային ինքնավարության վերաբերյալ, և նրանց տեսակետները շատ են մերձեցել: Մյուս կողմից՝ Իրաքի ազգային պետական շահերը, ներքին կայունության հասնելու, տնտեսական առաջընթացի և ուժեղ Իրաք ստեղծելու խնդիրները նույնպես պահանջում են քրդերին իրական ինքնավարություն տրամադրել:

Իրանում նույնպես քրդերը հանդես են գալիս ինքնավարության պահանջով, և դա համարվում է նրանց գլխավոր քաղաքական պահանջը: Սակայն այդ պահանջը նույնպիսի հետևողականությամբ ու վճռականությամբ չի առաջադրվում, և, որ ավելի կարևոր է, նրա իրականացման համար այնպիսի լայնածավալ պայքար չի մղվում, ինչպես Իրաքում: Դիշտ է, պետք է նկատի ունենալ քաղաքական պայմանների տարբերությունը երկու երկրներում:

Իրանի Իսլամական Հանրապետությունում այն գիծն է անցկացվում, որ իրանական սահմանադրության շրջանակներում, իսլամական հիմնադրույթների և շարիաթի նորմերի հիման վրա միանգամայն հնարավոր են քրդերի, որոնք նույնպես դավանում են իսլամ, ազգային իղծերի իրականացումը: Եվ այդ պատճառով էլ քրդական ինքնավարության ոչ մի անհրաժեշտություն չկա:

Այս կապակցությամբ հիշեցնենք, որ 1981 թ. հունվարին Մեքքայում կայացած «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության, որի մեջ մտնում են աշխարհի մոտ 45 իսլամական պետություններ, այդ թվում և Իրանը, երրորդ

քարձրագույն ժողովն ընդունեց հատուկ որոշում «խալամական ազգի» վերաբերյալ: Ըստ այդ որոշման՝ «բոլոր մահմեդականները, թեկուզ և տարբեր իրենց լեզվով, գույնով և բնակատեղիով, կազմում են մեկ ազգ և միմյանց հետ կապված են ընդհանուր հավատով և աշխարհում իրականացնում են մի առաքելություն»: Փաստորեն, դա մի վտանգավոր փորձ է քրդերին զրկելու ազգային ինքնատիպությունից և տարրալուծելու նրանց պարսիկների մեջ՝ օգտագործելով լեզվական և կրոնական ընդհանրության գործոնները:

Սակայն քրդերն ամենաձանր վիճակում են Թուրքիայում, որտեղ տիրում է բոլորովին այլ իրադրություն: Ամբողջ ողբերգությունը նրանում է, որ թուրքական կառավարությունը, Թուրքիայի բոլոր պաշտոնական պետական և քաղաքական կառույցները չեն ճանաչում քրդերին՝ որպես առանձին, ոչ թուրքական էթնոս: Ամեն մի ելույթ կամ հայտարարություն՝ քրդերի գոյության, նրանց առանձին լեզվի և մշակույթի, ազգային և քաղաքական իրավունքների մասին, խստորեն արգելվում, հետապնդվում և պատժվում է: Քրդերին, որոնք պայքարում են իրենց իրավունքների, պարզապես քուրդ կոչվելու համար, թուրքական իշխանությունները դիտում են որպես խռովարարներ, անջատողականներ, ահաբեկիչներ, երկրի քաղաքական անդորրը խախտողներ և դաժանորեն պատժում են ու բանտերը նետում: Առայժմ թուրքական իշխանություններին հաջողվում է բանակի, քրդական վիլայեթներում արտակարգ դրություն մտցնելու և այլ պատժիչ միջոցներով «խաղաղեցնել» և իրենց ենթակայության տակ պահել քրդերին:

Ստեղծված իրավիճակն իր կնիքն է դրել Թուրքիայի քրդերի գործելակերպի, պայքարի մեթոդների և պահանջների վրա: Նրանք այսօր փաստորեն հանդես են գալիս, պայքարում մարդու տարրական իրավունքների համար: Ռազմական խիստ կարգի պայմաններում թույլ է հնչում քրդերի ձայնը ավելի մեծ ազգային և քաղաքական պահանջների մասին: Այդ պահանջները, այդ թվում և ազգային ինքնավարության վերաբերյալ, ներկայացնում են քրդական զանազան վտարանդի քաղաքական կազմակերպություններ, որոնք գործում են Արևմտյան Եվրոպայի երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, ԱՄՆ-ում:

Քրդական հարցը քննարկելիս, մանավանդ նրա լուծման հեռանկարի տեսանկյունից, հարկ է աչքի առաջ ունենալ մի կարևոր հանգամանք: Դա Թուրքիայի, Իրանի և Իրաքի՝ միասնական ճակատով հանդես գալն է՝ ընդդեմ քրդերի ազգային խղճերի: Ինչ բնույթի հակասություններ էլ որ լինեն այդ

երեք պետությունների միջև, նրանք անմիջապես դրանք մոռացության են տալիս և միավորում իրենց ջանքերը՝ քրդերին հնազանդության մեջ պահելու համար: Այդպես վարվեց Իրանի շահ Մուհամմադ Ռեզա Պահլավին 1975 թ., երբ համաձայնության գալով Իրաքի կառավարության հետ Շատ ալ Արաբի հետ կապված վիճելի հարցերի շուրջ՝ հնարավորություն տվեց վերջինիս ճնշելու քրդական շարժումը, որ գլխավորում էր Մուսաֆա Բարզանին: Իրաքին նման «ձառայություն» մատուցեց Թուրքիան 1987 թ., երբ թուրքական զորքերը իրաքյան կողմի թույլտվությամբ մտան Իրաք և ուղղակի մասնակցեցին քրդական հերթական ապստամբության ճնշմանը:

Թուրքիան, Իրանը և Իրաքը միմյանց, բացի ռազմականից, ցույց են տալիս նաև քաղաքական և բարոյական աջակցություն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակներով: Դա փայլուն կերպով դրսևորվեց Պարսից ծոցի պատերազմի ավարտից հետո:

Ռազմական պարտություն կրած և ներքնապես թուլացած Իրաքում սկսվեց քրդական ապստամբություն, որի ժամանակ ձայներ էին հնչում իրաքյան քրդերի անկախության մասին: Դա խիստ անհանգստացրեց Թուրքիային և Իրանին, որոնք ոչ առանց հիմքի վախենում էին, որ անկախ Քրդստանի ստեղծումը իրաքյան տարածքներում շրթայական ռեակցիա կառաջացնի և Թուրքիայի ու Իրանի քրդերի համար խթան կդառնա քրդական հարցը այդ երկրներում ևս նման ձևով լուծելու համար: Ահա թե ինչու Թուրքիան և Իրանը, որոնք թեև մտնում էին հակաիրաքյան կոալիցիայի մեջ, վճռականորեն հանդես եկան հանուն Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման, որը տվյալ համատեքստում նշանակում էր հանդես գալ ընդդեմ քրդական անկախ պետության ստեղծման: Իսկ 1991 թ. մարտին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետ բանակցությունների ժամանակ Թուրքիայի նախագահ Թուրգուք Օզալը լրջորեն նախագգուշացրեց նրան, որ Թուրքիան վճռականորեն դեմ է և թույլ չի տա իրաքյան Քրդստանի անջատումը և անկախ պետության ստեղծումը: Ջորջ Բուշը հաշվի նստեց թուրքական նախագահի նման վճռական պահանջի հետ:

Թուրքիայի, Իրանի և Իրաքի համագործակցությունը լրացուցիչ դժվարին խոչընդոտ է ստեղծում քրդական հարցի լուծման ճանապարհին:

Իսկ ինչպիսի՞ն է ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի դիրքորոշումը քրդական հարցում: Նման հարցադրումը տեղին է, եթե նկատի ունենանք այն մեծ դերը, որ նրանք խաղում են Մերձավոր և Միջին Արևելքում, և առանց նրանց համա-

ձայնության և համատեղ գործողությունների հնարավոր չէ տարածաշրջանային որևէ կոնֆլիկտի լուծում: ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի դիրքորոշումը քրդական հարցում այնպես ցցուն չէ, ինչպես արաբա-իսրայելական կոնֆլիկտում: Դա կարելի է մասամբ բացատրել այն հանգամանքով, որ նրանք առանձնապես խորը չեն ներգրավվել քրդական կոնֆլիկտի մեջ: Բայց, այնուհանդերձ, նրանք երկուսն էլ ունեն իրենց մոտեցումները, որոնք, անշուշտ, ազդում են «քրդական ճակատի» իրադրության վրա:

ԱՄՆ-ի կառավարության համար քրդական հարցը՝ որպես ժողովրդի հարց, գոյություն չունի: Նրա համար ամեն ինչ հանգում է մարդու իրավունքներին: Այլ կերպ ասած, քրդական հարցի լուծումը թուրքիայում ազգային ինքնավարության ձևով ԱՄՆ-ի համար գոյություն չունի: Նման դիրքորոշումը միանգամայն ձեռնտու է թուրքիային, որովհետև եթե ԱՄՆ-ը եռանդուն կերպով աջակցեր քրդերի պայքարին՝ նրանց ազգային իրավունքների համար, ապա թուրքիան կկանգնեք մեծ բարդությունների առջև: Բայց ԱՄՆ-ը չի ցանկանում նեղացնել իր հավատարիմ դաշնակցին՝ թուրքիային, քանի որ նրան բացառիկ տեղ է հատկացնում իր ստրատեգիական ծրագրերում՝ Մերձավոր և Միջին Արևելքում և ԽՍՀՄ-ի մերձակա մատույցներում: ԱՄՆ-ի համար դա ավելի կարևոր է, քան քրդերի ազգային երազանքներից աջակցելը: Նման մոտեցումը քրդերին զրկում է ԱՄՆ-ի օգնության վրա հույս դնելուց:

ԽՍՀՄ-ի դիրքորոշումը նույնպես նպաստավոր է թուրքիայի համար: Խորհրդային ղեկավարությունը վերջին տարիներին անընդհատ շեշտում է արդեն հաստատված պետական սահմանների փոփոխման անթույլատրելիությունը: Նման դիրքորոշումը տվյալ դեպքում նշանակում է, որ Խորհրդային Միությունը չի պաշտպանում թուրքիայի ազգային սահմանների և կառույցների փոփոխման գաղափարը, առավել ևս՝ քրդերի անջատումը և անկախ պետականության ստեղծումը: Ըստ երևույթին՝ բարդությունների ծագումը խորհրդային սահմանների մոտ և նոր պետության առաջացումը, որի ինչ լինելը և ապագա քաղաքականությունը անկանխագուշակելի է, չի համապատասխանում Խորհրդային Միության պետական շահերին:

Քրդական «ճակատի» իրանական հատվածում ժամանակավոր լուծություն է: Եվ ստատուս քվոյի պահպանումն այստեղ առայժմ համապատասխանում է ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի շահերին, թեև նրանցից յուրաքանչյուրը հետապնդում է իր նպատակները: Սակայն նրանք հիմա չեն ցանկանում

քրդական հարցով զբաղել Իրանին, թեև դա չի նշանակում, թե ընդհանրապես բացառում են խաղարկել քրդական խաղաքարտը Իրանի, ինչպես նաև Թուրքիայի նկատմամբ իրենց քաղաքականության մեջ:

Ինչ վերաբերում է Իրաքին, ապա առայժմ այստեղ կան իրական հնարավորություններ քրդական ինքնավարության համար: Եվ քանի որ Իրաքի կառավարությունը խոստանում է քրդերի ինքնավարություն, դրան համապատասխան էլ իրենց դիրքորոշումն են սահմանում ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը:

Քայց այստեղ ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը տեղափոխություն կատարեցին: Խորհրդային Միությունը 50-70-ական թվականներին եռանդուն կերպով պաշտպանում էր քրդերի ազգային-ազատագրական շարժումը և սերտ բարեկամական կապեր էր հաստատել քրդական ղեկավարության հետ: Այդ իրավիճակը պահպանվեց մինչև 70-ական թվականների սկիզբը, որից հետո դրությունը փոխվեց, մանավանդ 1972 թ. խորհրդա-իրաքյան բարեկամության և համագործակցության պայմանագրի կնքումից հետո: ԽՍՀՄ-ը խորացրեց համագործակցությունն Իրաքի հետ ոչ միայն քաղաքական-տնտեսական, այլև ռազմական մարզերում: Դա հանգեցրեց սառնության խորհրդա-քրդական հարաբերություններում, ապա նաև ճեղքվածքի առաջացման: Պետք է նշել, որ մինչև այդ տարածայնություններ էին առաջացել քրդական ղեկավարության և Իրաքի կառավարության միջև:

Ստեղծված իրավիճակից վարպետորեն օգտվեց ԱՄՆ-ը՝ սերտ հարաբերություններ հաստատելով քրդական ապստամբների ղեկավարության հետ և աջակցություն ցույց տալով նրանց: Չի կարելի ասել, թե ամերիկացիներն այրվում էին քրդերի ազգային իրավունքների իրականացման ցանկությունից: Նրանք ուղղակի իրենց քաղաքական նպատակն էին հետապնդում՝ վերջնականապես քրդերին անջատել Խորհրդային Միությունից, ապակայունացնել դրությունը Իրաքում, որն ԱՄՆ-ի աչքերում երևում էր որպես ԽՍՀՄ-ի դաշնակից և հենարան և, վերջիվերջո, հասնել ԽՍՀՄ-ի դիրքերի բուլացմանը Արաբական Արևելքում:

ԱՄՆ-ը նոր հաջողությունների հասավ, երբ Պարսից ծոցի պատերազմի ընթացքում նրա զորամիավորումները մտան իրաքյան Քրդստան: ԱՄՆ-ի կառավարությունը սկսեց հանդես գալ որպես քրդերի պաշտպան՝ ընդդեմ իրաքյան կառավարողների բռնությունների: Եվ այժմ ԱՄՆ-ը ավելի մեծ հնարավորություն ունի ազդելու Իրաքում ընթացող գործողությունների վրա, քան Խորհրդային Միությունը, որի դիրքերը Պարսից ծոցի պատերազմի ըն-

թացքում նրա ոչ հստակ և անհետևողական քաղաքականության հետևանքով ակնհայտորեն թուլացան ինչպես Իրաքում, այնպես էլ մերձավորարևելյան ամբողջ շրջանում:

Այսպիսով՝ քրդական հարցի լուծումը նրա բոլոր երեք մասերում մոտ ապագայի գործ չէ: Ամենայն հավանականությամբ, այն կարող է լուծվել փուլ առ փուլ և ոչ միաժամանակ: Ավելի իրական է նրա լուծումը ինքնավարության ձևով:

Ինչ վերաբերում է միասնական անկախ քրդական պետության ստեղծմանը, ապա դա ավելի հեռավոր ապագայի հարց է: Դրա համար անհրաժեշտ է, որ հասունանան ինչպես ներքին, այնպես էլ արտաքին (միջազգային) պայմանները, որոնք պատմական այս ժամանակաշրջանում բացակայում են:

«Ազգ», Երևան,
24 օգոստոսի, 1991 թ.

IV. ԻՐԱՆԸ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (1979–1992 թթ.)

ԳԼՈՒԽ I. ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԿՁՔՈՒՆՔՆԵՐԻ ՀՈՉԱԿՈՒՄԸ

Իրանը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, բնական հարստությունների, առաջին հերթին՝ նավթի, տնտեսական ներուժի, պետականության մեծ փորձի, ավանդական նրբին և ճկուն դիվանագիտության և այլ գործոնների, տևական կարևոր դեր է խաղում Մերձավոր Արևելքում: Ջարմանալիորեն դարերի ընթացքում նա կարողացել է պահպանել իր այդ առաջնակարգ դերակատարությունը և այսօր էլ մեծապես ազդում է Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների բնույթի և տարածաշրջանում քաղաքական մթնոլորտի ձևավորման վրա:

Իրանը մերձավորարևելյան քաղաքական–ստրատեգիական համակարգի ամենաազդեցիկ պետություններից մեկն է, որի հետ չեն կարող հաշվի չնստել ինչպես հարևան երկրները՝ արաբական երկրները, Թուրքիան, Հայաստանը և այլն, այնպես էլ աշխարհագրական առումով այդ տարածաշրջանին չպատկանող այս աշխարհի հզորները՝ ԱՄՆ–ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան և այլ պետություններ:

Անվիճելի է, որ նորագույն շրջանում Իրանը իր քաղաքական և ռազմական հզորությանը հասավ իսլամական հեղափոխության վաղորդայնին: Մերտորեն համագործակցելով ԱՄՆ–ի հետ քաղաքական և ռազմական ասպարեզներում և նրանից ստանալով վիթխարի ռազմական օգնություն՝ շահը ստեղծեց հզոր զինված ուժեր: Դրան համապատասխան ձևավորվեց Իրանի արտաքին քաղաքականության դոկտրինան և որոշվեց նրա տեղը և դերակատարումը Մերձավոր Արևելքում:

Համաձայն այդ դոկտրինայի՝ Իրանը, առաջին՝ կոչված էր լրացնելու այն քաղաքական վակուումը, որը, արևմտյան քաղաքական շրջաններում տիրապետող մտայնության համաձայն, իբրև թե, առաջացել էր Պարսից ծոցի շրջանում Մեծ Բրիտանիայի հեռանալուց հետո: Եվ ԱՄՆ-ը, ինչպես նաև արևմտյան մյուս պետությունները, ամեն կերպ խրախուսում, ռազմական օգնություն և քաղաքական աջակցություն էին ցույց տալիս Իրանին նրա կողմից այդ կարևոր «առաքելությունը» հաջողությամբ իրականացնելու համար:

Երկրորդ՝ Իրանը դիտվում էր որպես հուսալի ռազմական պատվար Խորհրդային Միության ագրեսիվ մղումների ճանապարհին՝ ուղղված դեպի հարավ, դեպի Իրան, արաբական երկրներ, մասնավորապես՝ Միջերկրականի տաք ջրերը: Շահը մեծ հաճույքով էր ձգտում կատարել իր երկրի վրա դրված այդ «պատվավոր» առաքելությունը ՍԵՆՏՕ-ի ռազմական բրկի իր դաշնակիցներ Պակիստանի և Թուրքիայի և, հասկանալի է, նաև ԱՄՆ-ի հետ համատեղ:

Երրորդ՝ շահական Իրանը իր վրա էր վերցրել տարածաշրջանում ոստիկանական ֆունկցիաների իրականացումը՝ ազգային-ազատագրական շարժումների ճնշում Պարսից ծոցի ավազանում (Դոֆար և այլն), պահպանողական միապետական վարչակարգերին սպառնացող վտանգների դիմագրավում և այլն: Շահի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակներից մեկն էր թույլ չտալ, որ սասանվեն, առավել ևս տապալվեն տարածաշրջանի միապետությունները:

Եվ վերջապես, **չորրորդ՝** շահը վերոհիշյալ խնդիրների իրականացման հետ մեկտեղ հետամուտ էր Իրանի ազդեցության ուժեղացմանը և դիրքերի ամրապնդմանը Մերձավոր Արևելքում: Եվ այդ բնագավառում նա քիչ հաջողությունների չհասավ, թեև ձգտում էր ավելիին՝ Իրանը վերածել տարածաշրջանային մի այնպիսի գերիզոր պետության, որից այս կամ այն չափով կախման մեջ գտնվեին մյուս պետությունները:

70-ական թվականների կեսերին թվում էր, զոհն արտաքուստ, որ Իրանի դիրքերը շատ ամուր են: Նման պատկերացմանը նպաստում էր ոչ միայն իրանական լավ զինված բանակը, այլև սերտ հարաբերությունները սադաթյան Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Հորդանանի և Իսրայելի, այսինքն՝ այն պետությունների հետ, որոնք Իրանի հետ միասին ընթանում էին ԱՄՆ-ի քաղաքականության նախագծած հունով:

Սակայն 1979 թ. փետրվարյան հեղափոխությունը այաթոլլահ Խոմենյ-
նիի գլխավորությամբ հիմնովին ցնցեց Իրանը: Տապալվեց շահական վար-
չակարգը, և Իրանը հռչակվեց իսլամական հանրապետություն: Դրան հա-
մապատասխան տեղի ունեցավ արժեքների համընդհանուր վերագնահա-
տություն:

Շահի ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականությունը համար-
վեց սխալ և Իրանի ազգային պետական շահերին հակասող: Նոր դեկավա-
րության կարծիքով՝ այդ քաղաքականությունն ավելի շատ բխում էր
ԱՄՆ-ի և արևմտյան այլ պետությունների շահերից, Իրանը կախման մեջ
էր գցել Վաշինգտոնից և նրան ներքաշում էր քաղաքական արկածախնդ-
րության մեջ, որը մեծապես հարվածում էր Իրանի քաղաքական վարկին և
ավելորդ լարվածություն ստեղծում տարբեր, այդ թվում և հարևան պետու-
թյունների հետ:

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) դեկավարությունը
ԱՄՆ-ը հանեց Իրանի բարեկամ պետությունների ցանկից, և նա հայտնվեց
նրա ամենամեծ հակառակորդների ցուցակում: Դեռ ավելին՝ ԱՄՆ-ը հոր-
ջորջվեց «սև շեյթան»՝ «սև սատանա», և ըստ այդմ էլ վերակառուցվեցին Ի-
րանա-ամերիկյան քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ բնույթի
հարաբերությունները:

Վերանայվեցին հարաբերությունները նաև Խորհրդային Միության հետ,
որը կոչվեց «կարմիր շեյթան», այսինքն՝ «կարմիր սատանա»: Սակայն
միաժամանակ շեշտվեց, որ եթե «կարմիր շեյթանը» հարգի Իրանի անկա-
խությունը և գերիշխանությունը, ապա Իրանը երբեք զենք չի դառնա ԱՄՆ-ի
ծեռքում՝ ուղղված ԽՍՀՄ-ի դեմ:

Հարաբերությունների վերանայումը երկու գերիզոր պետությունների
հետ և լարվածության առաջացումը, մանավանդ ԱՄՆ-ի հետ, որը երբեմն
դրամատիկ բնույթ էր կրում (Իրանում ամերիկյան դիվանագետներին պա-
տանդ վերցնելը, ԱՄՆ-ի կողմից իրանական վիթխարի ֆինանսական մի-
ջոցների սառեցումն ամերիկյան բանկերում և այլն), չէր կարող չանդրա-
դառնալ Մերձավոր Արևելքի իրադրության վրա:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո ինչպես Իրանի ողջ
համակարգի, այնպես էլ արտաքին քաղաքականության հիմքում դրվեցին
իսլամական ֆունդամենտալիզմի սկզբունքները՝ նրանց շիական ընկալ-
մամբ և մեկնաբանությամբ: Դա միանգամայն նոր երևույթ էր միջազգային

հարաբերությունների բնագավառում, որը բխում էր Իրանի աստվածապետության՝ քեռկրատիայի վերածվելու իրողությունից:

Իրանի իսլամական հեղափոխությունը դիտվում էր որպես համաշխարհային պատմական երևույթ, որը, ինչպես ընդգծում էին իրանական մոռաջնոթրդները, իր նշանակությամբ դուրս էր գալիս իրանական ազգային շրջանակներից, իսկ նրա սկզբունքները կիրառելի են դառնում համայն մարդկության համար և, իհարկե, առաջին հերթին մուսուլմանական ժողովուրդների համար:

Իրանի մոր դեկավարները համոզված էին, որ արևմտյան (կապիտալիստական) և արևելյան (սոցիալիստական) մոդելներով հնարավոր չէ հասնել համայն մարդկության առջև կանգնած քաղաքական, տնտեսական և ազգային բազում ու տարատեսակ հիմնախնդիրների լուծմանը: Նրանք վստահ են, որ միայն իսլամական ֆունդամենտալիզմի շրջանակներում և սկզբունքների հիման վրա կարելի է հասնել մարդկության երջանկությանը: Այստեղից էլ՝ ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության կարևոր հիմնադրույթներից մեկը՝ իսլամական հեղափոխության և նրա հռչակած սկզբունքների արտահանության թույլատրելիությունը, որը Իրանի հոգևոր առաջնորդները, մանավանդ հեղափոխությանը հաջորդած սկզբնական շրջանում բավականին ջերմնառնդորեն փորձում էին կիրառել:

ԳԼՈՒԽ II. ԻՐԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Իրանի Իսլամական Հանրապետության կազմավորումից հետո անհրաժեշտ էր վերանայել շահական ժամանակներից ժառանգություն մնացած բարեկամ և ոչ բարեկամ արաբական պետությունների ցանկը՝ ելակետ ունենալով արտաքին քաղաքականության բնագավառում որդեգրած մոր սկզբունքները:

Արաբական երկրներն իրենց հերթին անթաքույց տազմապ էին ապրում՝ կապված Իրանում տեղի ունեցած փոփոխությունների և արտաքին քաղաքականության մոր սկզբունքների հետ՝ մտավախություն ունենալով, որ Իրանը կարող է վերածվել ագրեսիվ պետության, զենքի միջոցով խախտել գո-

յություն ունեցող ուժերի հավասարակշռությունը և իրենց պարտադրել հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական իր մոդելը:

1. ԻՐԱՆԱ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ԵՎ ԽՁՈՒՄԸ

Առաջինը վերանայման ենթարկվեցին իրանա-եգիպտական հարաբերությունները, որոնք անմիջապես ընդունեցին սուր, կարելի է ասել՝ բացահայտ առճակատման բնույթ, որը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով:

Երբ Իրանի շահ Մուհամմադ Պահլավին 1979 թ. հունվարի 16-ին իր ընտանիքով հեռացավ երկրից, սկզբնական շրջանում նա հանգրվանեց Եգիպտոսում: Թեև շուտով նա հեռացավ այնտեղից, սակայն որոշ դեգերումներից հետո՝ Մարոկկո, Բահամյան կղզիներ, Մեքսիկա, ԱՄՆ և Պանամա, 1980 թ. մարտին նա կրկին վերադարձավ Եգիպտոս՝ արժանանալով Եգիպտոսի պրեզիդենտ Անվար Սադաթի ամենաջերմ ընդունելությանը:

Իր-Հ-ի ղեկավարությունը, որը ուշադրությամբ հետևում էր շահի և նրա ընտանիքի տեղաշարժերին, պահանջում էր շահին հանձնել Իրանին: Անվար Սադաթը ոչ միայն հրաժարվեց շահին հանձնել իրանական իշխանություններին, այլև նրան տվեց քաղաքական ապաստան՝ բույլատրելով, որ նրա ընտանիքի անդամները ևս մշտական բնակություն հաստատեն Եգիպտոսում: Շահը մնաց բուրգերի երկրում մինչև իր մահը՝ 1980 թ. հուլիսի 27-ը: Հենց Կահիրեում էլ Մուհամմադ Պահլավիի որդին՝ Ռեզան, 1980 թ. հոկտեմբերի 31-ին հռչակվեց Իրանի նոր միապետ:

Շահին աջակցելը և նրան ապաստան տալը առաջին լուրջ ճեղքվածքն առաջացրեցին Իրանի և Եգիպտոսի փոխհարաբերություններում:

Հաջորդը եգիպտա-խորայելական հաշտության պայմանագրի ստորագրումն էր 1979 թ. մարտին, որն իրականացվեց Քեմալ Դևլուլի համաձայնագրի շրջանակներում: Իսամ Խոմեյնին և նրա զինակիցները, որոնք դեռ նոր էին վերադարձել Իրան և իրենց ձեռքը վերցրել իշխանությունը, խիստ բացասաբար վերաբերվեցին դրան: Նրանք գիտեին, որ այդ պայմանագրի հետևում կանգնած էր ԱՄՆ-ը, և նրա կնքումը ուժեղացնում էր վերջինիս դիրքերը Մերձավոր Արևելքում: Իրանի ղեկավարության կարծիքով՝ պայմանագիրը ծառայում էր նաև Իսրայելի շահերին: Իսկ Խոմեյնին արդեն

պայքար էր հայտարարել Իսրայելի ծավալապաշտական քաղաքականության դեմ՝ խոստանալով օգնել Պաղեստինի արաբ ժողովրդին՝ տիրանալու իր օրինական իրավունքներին, իսկ փախստականներին՝ վերադառնալու իրենց հայրենի օջախները:

Քաղաքական նման մոտեցման պայմաններում Եգիպտոսը Իրանի դեկավարության աչքում երևում էր որպես ամերիկյան իմպերիալիզմի և սիոնիզմի հարազատ զավակ, Իսրայելի կամակատար, որպես գործիք նրանց ձեռքում, որը վերջին հաշվով ուղղված էր նաև Իրանի դեմ:

Մյուս կողմից՝ Եգիպտոսի դեկավարությունը մեծ անհանգստությամբ էր հետևում Իրանում կրոնապետների իշխանության հաստատմանը, որը մեծապես խթանեց իսլամական ալիքի բարձրացմանը, զանազան իսլամական կազմակերպությունների կազմավորմանը և նրանց գործունեության ակտիվացմանը տարբեր երկրներում, այդ թվում և Եգիպտոսում: Անվար Սադատը, որը ժամանակին հարել էր «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությանը, հստակ կերպով պատկերացնում էր, թե իր հշխանության համար ինչպիսի վտանգ կարող է ներկայացնել իսլամական ֆունդամենտալիզմը և նրա դիրքերի ամրապնդումը Եգիպտոսում:

Իրանական իսլամական հեղափոխության ազդեցության տակ Եգիպտոսում, իրոք, գլուխ բարձրացրին «Մուսուլման եղբայրները», ինչպես նաև սպարեզ իջան այլ իսլամական կազմակերպություններ, որոնք չէին թաքցնում իրենց համակրանքը իմամ Խոմեյնիի հռչակած սկզբունքների նկատմամբ և բացեիքաց հանդես էին գալիս Եգիպտոսում ևս իրանական մոդելի վարչակարգ հաստատելու օգտին: Այդ հարցում նրանք վայելում էին Իրանի աջակցությունը և արժանանում նրա բարոյական խրախուսանքին: Անվար Սադատը ամեն կերպ ձգտում էր չեզոքացնել իրանական ազդեցությունը: Մյուս կողմից՝ նա խստորեն հետապնդում էր իսլամական կազմակերպություններին. այդ ուղղությամբ, սակայն, ոչ միայն ոչ մի հաջողության չհասավ, այլև 1981 թ. հոկտեմբերին իսլամական ճակատից արձակված զնդակի գոհը դարձավ:

Անվար Սադատի սպանվելուց և Հուսնի Մոբարքի՝ Եգիպտոսի պրեզիդենտ դառնալուց հետո՝ 80-ական թվականներին, իրանա-եգիպտական հարաբերություններն էլ ավելի սրվեցին: Դա կապված էր այն հանգամանքի հետ, որ իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ Եգիպտոսը պաշտպանում էր Իրաքին և նրան ցույց տալիս ամենալայն օգնություն, այդ թվում

և ռազմական: Դրա արդյունքը եղավ այն, որ Իրանի և Եգիպտոսի միջև խզվեցին բոլոր տեսակի՝ դիվանագիտական, միջպետական և տնտեսական հարաբերությունները:

Եգիպտոսն անցավ Իրաքի կողմը, քանի որ նրա շահերին չէին համապատասխանում Իրանի հաղթանակը և Իրաքի պարտությունը: Եգիպտոսի ղեկավարության կարծիքով՝ Իրանի հաղթանակը կստեղծեր նոր քաղաքական իրողություն՝ ի վնաս արաբների, և կնպաստեր Իրանի գերակայության հաստատմանը տարածաշրջանում:

Պաշտպանելով Իրաքին և հակադրվելով Իրանին՝ Եգիպտոսը միաժամանակ ձգտում էր դուրս գալ այն քաղաքական մեկուսացումից, որի մեջ հայտնվել էր Քեմալ Դեհլիի համաձայնագրի ստորագրումից հետո, վերադառնալ արաբական միասնության շարքերը և կրկին ստանձնել առաջատար արաբական երկրի դերը:

Վերջին շրջանում, մանավանդ իրանա-իրաքյան պատերազմի ավարտից հետո, իրանա-եգիպտական հարաբերություններում նշմարվեց որոշ մեղմացում: Երկուստեք դրսևորվում են միջպետական հարաբերությունները նորմալացնելու միտումներ: Այդ ուղղությամբ որոշակի դեր է կատարում Սիրիան, որը երկու երկրների հետ պահպանում է լավ հարաբերություններ:

Իրանա-եգիպտական հարաբերությունների կարգավորումը կարող է դրականորեն անդրադառնալ մերձավորարևելյան տարածաշրջանում քաղաքական մթնոլորտի բարելավման և իրադրության կայունացման վրա:

2. ՍՈՒՆՆԻ-ՇԻԱ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Իրանա-արաբական հարաբերությունների վրա իր կնիքը դրեց ավանդական սուննի-շիա հակամարտության սինդրոմը: Իսլամի այդ երկու ուղղությունների առկայությունը մշտապես հակասությունների և հակամարտությունների աղբյուր է հանդիսացել և պատմական տարբեր դարաշրջաններում տարբեր ձևով դրսևորվել: Այդ հարցը կրկին ջրի երես դուրս եկավ իրանական հեղափոխությունից հետո: Հայտնի է, որ Իրանում մեծամասնություն են կազմում շիաները: Իսլամական հեղափոխությունը և Իրանի վերածվելը իսլամական հանրապետության ընկալվեց որպես շիիզմի հաղթարշավ, որն առաջ բերեց արաբական երկրներում բնակվող շիաների խանդավառությունը: Նրանք հպարտ էին իսլամի շիա ուղղությանը պատկանելու

համար և կարծում էին, որ հասել է իրենց աստեղային ժամը: Նրանք իրենց աշխատատեղերում, բնակարաններում և շիաներով բնակեցված թաղերում ու փողոցներում հրապարակայնորեն այաթուլլահ Խոնեյնիի նկարներն էին փակցնում:

Սակայն այլ դիրք գրավեցին արաբական երկրների կառավարությունները, այդ թվում և Պարսից ծոցի միապետները: Նրանք իրանական հեղափոխության, նրա հռչակած սկզբունքների և Իրանի արտաքին քաղաքականության մեջ մեծ վտանգ էին տեսնում իրենց գոյության համար: Նրանց առանձնապես անհանգստացնում էր իրանական հեղափոխության ունիվերսալության տեսադրույթը, որը հռչակվեց նրա առաջնորդների կողմից և դրա հետ կապված՝ այդ հեղափոխության արտահանության թեզը, որը յուրահատուկ ձևով իր արտահայտությունը գտավ Իրանի նոր սահմանադրության մեջ: Նրա 154-րդ հոդվածում ասվում էր, որ Իրանը «կայաշտպանի թույլերի պայքարն ընդդեմ ամբարտավանության՝ աշխարհի որ մասում էլ որ լինի»:

Ի՞նչն էր անհանգստացնում արաբական երկրներին, որը բավարար չափով հաշվի չառավ Իրանի ղեկավարությունը:

Առաջին՝ նրանք սուսնի-շիա հակամարտությունը տվյալ դեպքում չէին դիտում որպես պայքար միևնույն կրոնի երկու ուղղությունների միջև, այլ դիտում էին որպես մի միջոց, որով Իրանը փորձում էր տարածել իր ազդեցությունը և ամրապնդել իր քաղաքական դիրքերը՝ օգտագործելով արաբական աշխարհի շիաներին: Այդ վտանգը հատկապես ուժեղ էին զգում Բուվեյթը, Կատարը, Բահրեյնը, Օմանը և Արաբական Միացյալ Էմիրությունները, որոնք ի վիճակի չէին սեփական ուժերով որևէ կերպ դիմագրավել Իրանին:

Երկրորդ՝ հասարակության վերակառուցման իրանական մոդելը խարսխվում էր հանրապետական վարչակարգի հաստատման սկզբունքի վրա: Հասկանալի է, որ Սաուդյան Արաբիան, Հորդանանը և Պարսից ծոցի հինգ միապետությունները չէին կարող ընդունել հանրապետական վարչակարգը և թշնամական դիրք գրավեցին այդ գաղափարի ջատագով Իրանի նկատմամբ:

Երրորդ՝ հասարակության վերակառուցման իրանական մոդելի մյուս կարևոր սկզբունքը իսլամական աստվածապետություն ստեղծելն էր: Այս սկզբունքը ևս ընդունելի չէր արաբական երկրների ճնշող մեծամասնության համար:

Պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Իրանի քաղաքա-

կան և հոգևոր առաջնորդները իսլամի գաղափարները հակադրում էին արաբական մացիոնալիզմին՝ նախապատվությամբ տալով առաջինին: Այդ հարցում Իրանի Իսլամական Հանրապետության առաջին պրեզիդենտ Բանի Սադրը մույնիսկ այնքան հեռու գնաց, որ արաբական մացիոնալիզմը համարեց սիոնիզմի մի տարատեսակ: Արաբները այդ մեղադրանքն ընդունեցին որպես ազգային վիրավորանք:

Արաբական ղեկավարները և սուննի առաջնորդները իրենց հերթին Իրանի քաղաքականությունը բնութագրեցին որպես իսլամի ապարարական մագման փորձ, մուսուլմանական կենտրոնը իր բնօրրանից՝ արաբական աշխարհից, մասնավորապես Արաբական քերականագիտության դեպի արևելք տեղաշարժելու միտում, որի անմիջական քաղաքական հետևանքներից մեկը լինելու էր արաբական երկրների մշակութային նվազում և Իրանի դերի քարծրացում:

3. ԻՐԱՆԱՎԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ԵՎ ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ

Խիստ բարդ ընթացք ստացավ հարաբերությունների զարգացումը Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև, և դա բնական էր: Սաուդյան Արաբիայում են գտնվում իսլամական աշխարհի երկու կարևոր հոգևոր կենտրոնները և սրբավայրերը՝ Մեքքան և Մադինան, որոնք հավասարապես ընդունելի ու պաշտելի են աշխարհի բոլոր մուսուլմանների՝ թե՛ սուննիների և թե՛ շիաների համար, որոնք, սակայն, միևնույն ժամանակ սուննիզմի կենտրոններն են: Սաուդյան Արաբիան հաշտ աչքով չէր նայում իրանական հեղափոխության ազդեցության տակ շիիզմի ակտիվ քարծրացմանը և ուժեղացմանը, մասնավաճառ որ այն զուգակցվում էր միապետական կարգերի տապալման և հանրապետական կարգերի հաստատման հետ: Դա խիստ մտահոգում էր Սաուդյան կառավարող ընտանիքին:

Իրանա-սաուդական լարվածությունը 1987 թ. վերածվեց բացահայտ քախտման իրանական ուխտագնացների և սաուդյան ոստիկանության միջև Մեքքա հաջի ուխտագնացության ժամանակ: Սպանվեցին բազմաթիվ ուխտագնացներ, ինչպես նաև ոստիկաններ: Սաուդյան կողմը իրանական ուխտագնացների դեմ կիրառված քայլերը բացատրում էր նրանով, որ վերջիններս Մեքքա ուխտի գնալու հնարավորությունը օգտագործել էին քաղա-

քական նպատակների համար, ցույցեր էին կազմակերպել և զբաղվել հակասատուական քարոզչությամբ:

Այդ աղյուսակի իրադարձությունները ծանր տպավորություն թողեցին ամբողջ մուսուլմանական աշխարհում և տարածայնություններ առաջացրին մուսուլմանների միջև: Արաբ սուննիները և կառավարությունները հանդես եկան Սաուդյան Արաբիայի, իսկ շիաները՝ Իրանի պաշտպանությամբ:

Այդ իրադարձությունների թարմ տպավորության տակ Իրանն առաջ քաշեց Սաուդյան Արաբիայում գտնվող իսլամական սրբավայրերը իսլամական միջազգային իշխանության կամ ուժերի հսկողության տակ դնելու հարցը՝ զրկելով Սաուդյան Արաբիային նրանց նկատմամբ որևէ իրավունքից: Սաուդյան Արաբիան կտրուկ կերպով մերժեց այդ անբանական առաջարկությունը՝ համարելով դա ոտնձգություն իր սուվերեն իրավունքների նկատմամբ: 1987 թ. Ամանում գումարված արաբական երկրների զագաթնաժողովը լիովին պաշտպանեց Սաուդյան Արաբիային և ընդունեց հատուկ որոշում, որտեղ ասված էր, որ միայն նրան է պատկանում Մեքքա կատարվող ուխտագնացության կազմակերպման և դրա հետ կապված կարգուկանոնի պահպանման իրավունքը, և նրա տարածքում գտնվող սրբավայրերը պետք է գտնվեն բացառապես սաուդյան իշխանությունների իրավասության ներքո:

Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև Պարսից ծոցի մյուս միապետությունների հետ Իրանի հարաբերությունների սրճանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում նրանք՝ արաբական այդ պետությունները, քաղաքական աջակցություն և ֆինանսական լայն օգնություն էին ցույց տալիս Իրաքին:

Ի վերջո, 1988 թ. մայիսին Սաուդյան Արաբիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ:

Սակայն պետք է նշել, որ չնայած Սաուդյան Արաբիայի ազդեցությանը Պարսից ծոցի արաբական երկրների վրա և նրա առաջատար դերին՝ Պարսից ծոցի երկրների համագործակցության խորհրդում, որի մեջ Սաուդյան Արաբիայի հետ միասին մտնում են նաև Քուվեյթը, Բահրեյնը, Կատարը, Օմանը և Արաբական Միացյալ Էմիրությունները, նրանցից և ոչ մեկը չհետևեց Սաուդյան Արաբիայի օրինակին և չխզեց դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ: Սակայն նրանք, չնայած Իրանի դժգոհությանը, չդադարեցրին նաև իրենց օգնությունը Իրաքին: Ստացվեց այնպես, որ երկու կողմերն էլ լեռնայն հաշտվեցին մոր ստատուս քվոյի հետ:

4. ԻՐԱՆԱ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իրանա-իրաքյան հարաբերությունները շահի տապալումից և իսլամական հանրապետության հռչակումից հետո ընդունեցին դրամատիկ բնույթ և, ի վերջո, երկու հարևան երկրները ներգրավվեցին երկարատև ու արյունալի պատերազմի մեջ, որը շատ ծանր մատեց նրանց վրա:

Պատերազմի պատճառներից մեկը Իրանի և Իրաքի միջև վաղուց ի վեր գոյություն ունեցող տարածքային վեճն էր՝ կապված Շատ ալ Արաբի հետ:

1975 թ. Ալժիրում Իրանի շահ Մուհամմադ Պահլավին և Իրաքի վիցեպրեզիդենտ Սադամ Հուսեյնը այդ վեճը լուծելու վերաբերյալ ստորագրեցին համապատասխան համաձայնագիր: Կողմերը պայմանավորվեցին, որ իրանա-իրաքյան սահմանն անցնելու է ոչ թե Շատ ալ Արաբի ձախ ափով, որով հաստատվում էր Իրաքի սուվերենությունը գետի ամբողջ ջրային տարածքի վրա, այլ գետի տալվեյզով, այսինքն՝ գետի նավարկելի մասի մեջտեղով: Իրաքի այդ զիջման դիմաց Իրանը պարտավորվեց դադարեցնել օգնությունը Իրաքի ապստամբ քրդերին, որոնց ղեկավարում էր Մուսթաֆա Բարզանին, և որոշ տարածքային շտկումներ կատարել հօգուտ Իրաքի:

Պայմանագրի ստորագրումից հետո սահմանը երկու պետությունների միջև հաստատվեց տալվեյզով, իսկ շահը դադարեցրեց օգնությունը իրաքյան քրդերին, որը հնարավորություն տվեց Իրաքի կառավարությանը՝ արագորեն ջախջախել քրդական ապստամբությունը:

Սակայն շահի տապալումից և իրանական հեղափոխությունից հետո՝ 1979 թ., Իրաքի կառավարությունը միակողմանիորեն չեղյալ հայտարարեց 1975 թ. պայմանագիրը՝ պատճառաբանելով, թե իրանական կողմը ամբողջական կերպով չի կատարել իր ստանձնած պարտավորությունները՝ հատկապես տարածքային շտկումների հարցում: Եվ նա իրանա-իրաքյան պետական սահմանը վերահաստատեց մինչև 1975 թ. ստորագրած համաձայնագրի դրությամբ:

Իրանը չճանաչեց Իրաքի կառավարության այդ քայլը և այն համարեց անօրինական:

Երկրորդ պատճառը իրանական հեղափոխության սկզբունքներն էին, այդ հեղափոխությունն արտահանելու Իրանի ձգտումները և շիիզմի այլիքի քարծրացումը, որն առաջացրեց Իրաքի բաասական ղեկավարության և

արդեն պրեզիդենտ դարձած Սադան Հուսեյնի խոր մտահոգությունը, եթե ոչ տագնապը՝ դրա մեջ տեսնելով մահացու վտանգ բասասական վարչակարգին:

Հայտնի է, որ Իրաքի բնակչության մեծամասնությունը դավանում է շիիզմ, իսկ ղեկավարությունը գտնվում է սուննիների ձեռքում, որոնք դավանական առումով կազմում են փոքրամասնություն: Իրաքը դիտվում էր առաջին և ամենահարմար երկիրը իրանական իսլամական հեղափոխության արտահանման տեսանկյունից: Իսկ դա նշանակում էր Իրաքի բասասական վարչակարգի վերացում և իսլամական հանրապետության ստեղծում: Գակիմեր մի նոր աստվածապետություն՝ Իրաքում Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության կողմից հաստատված աշխարհիկ վարչակարգի փոխարեն: Իրանի նոր ղեկավարները չէին թաքցնում իրենց ատելությունը Իրաքի բասասական, այսպես կոչված, սոցիալիստական վարչակարգի և նրա միահեծան առաջնորդ Սադան Հուսեյնի նկատմամբ:

Եվ երրորդ՝ որոշակի դեր խաղաց նաև անձնական գործոնը, թեև ոչ այնպես վճռականորեն, ինչպես վերոնշյալ երկու գործոնները: Մենք նկատի ունենք հետևյալ պարագան:

Շահի և նրա վարչակարգի նկատմամբ անհաշտ ընդդիմության մեջ գտնվող այաթոլլահ Խոմեյնիի 1965 թ. հարկադրված էր հեռանալ Իրանից և քաղաքական ապաստան գտնել Իրաքում, որի տարածքում են գտնվում շիաների կարևոր սրբավայրերը, ինչպես Նաջաֆը, Քերբելան և այլն: Խոմեյնիի հաստատվեց Նաջաֆում, որտեղից նա ղեկավարում էր հակաշահական պայքարը Իրանում:

Իրաքի կառավարությունը սկզբնական շրջանում բարյացակամորեն էր վերաբերվում Խոմեյնիի գործունեությանը, քանի որ 1960–70–ական թվականներին իրանա–իրաքյան հարաբերությունները լարված էին: Սակայն 1975 թ. իրանա–իրաքյան պայմանագրի ստորագրումից հետո այդ լարվածությունը թուլացավ, գոնե արտաքինապես, և Իրաքի կառավարությունն աստիճանաբար իր վերաբերմունքը Խոմեյնիի նկատմամբ փոխեց ղեպի վատը: Ի վերջո, իման Խոմեյնիի 1978 թ. հոկտեմբերին հարկադրված էր հեռանալ Իրաքից և տարագրել Ֆրանսիա:

Խոմեյնիին դա երբեք չներեց Սադան Հուսեյնին:

Այս բոլոր հանգամանքները հանգեցրին պատերազմի՝ երկու երկրների միջև:

Իրանա-իրաքյան պատերազմը սկսվեց 1980 թ. սեպտեմբերի 22-ին, երբ իրաքյան բանակը, որը հիմնականում զինված էր խորհրդային զենքով և վարժեցված խորհրդային ռազմական մասնագետների կողմից, անցավ հարձակման և ներխուժեց Իրանի տարածքը, թեև որոշ մասնագետներ գտնում են, որ Իրաքի այդ քայլը հարկադրական էր և հրահրված էր Իրանի կողմից: Իրաքի նպատակն էր կանխել իրանական իսլամական հեղափոխության տարածումը և պահպանել երկրում գոյություն ունեցող վարչակարգը: Եվ քանի որ շահի անկումից հետո որոշ ժամանակ տիրում էր խառնաշփոթ վիճակ, որը համակել էր մաև բանակը, Իրաքը հույս ուներ ջախջախիչ հարված հասցնել իրանական հեղափոխությանը:

Իրաքը հավատացած էր, որ Իրանի դեմ պատերազմ սկսելով՝ նա իրականացնում է համաարաբական առաքելություն՝ վերացնում է արաբական երկրների գլխին կախված իրանական վտանգը և կանխում Իրանի դիրքերի ամրապնդումը, հատկապես Պարսից ծոցի շրջանում: Ելնելով դրանից՝ Իրաքի ղեկավարությունն ակնկալում էր արաբական մյուս պետությունների աջակցությունը: Եվ, իրոք, բացառությամբ Սիրիայի՝ արաբական երկրները համդես եկան ի պաշտպանություն Իրաքի: Նրանք Իրաքին ցույց տվեցին վիթխարի ֆինանսական և նյութական օգնություն ու ապահովեցին նրան քաղաքական աջակցություն, թեև ոչ այն չափով և աստիճանի, որքան սպասում էր Իրաքը: Համենայն դեպս, արաբական ոչ մի պետություն պատերազմ չհայտարարեց Իրանին:

Պատերազմի սկզբնական փուլում՝ 1980-1981 թթ., հաջողությունն ուղեկցում էր իրաքյան բանակին, որը, ներխուժելով Իրան, բավականին խորացավ երկրի խորքը և գրավեց զգալի տարածքներ: Սակայն Իրանը կարողացավ բարդ պայմաններում ոտքի կանգնեցնել իր ռազմական ուժերը, որոնք 1981 թ. կասեցրին իրաքյան զորքերի առաջխաղացումը և, անցնելով հակահարձակման, իրաքյան զորքերին դուրս մղեցին Իրանից, սպա մաև պատերազմական գործողությունները տեղափոխեցին Իրաքի տարածք: 1982 թ. մարտերն արդեն ընթանում էին Իրաքի տարածքում: Իրանական զորքերը գրավեցին մի շարք բնակավայրեր, իսկ 1986 թ. մաև Ֆատ մավահանգիստը, որը կարևոր ռազմավարական կենտրոն էր Շատ ալ Արաբի գետաբերանում, և ընդհուպ մոտեցան Քուվեյթի սահմաններին:

1980-ական թվականների կեսերից պարզ դարձավ, որ ոչ մի կողմն էլ ի վիճակի չէ հասնելու վճռական և վերջնական հաղթանակի: Պատերազմն

ընդունեց դիրքային բնույթ, և երկու կողմն էլ արյունաքան էր լինում՝ կրելով մարդկային և նյութական հսկայական կորուստներ:

Պատերազմը դադարեցնելու միջնորդական դերով հանդես եկան Ալժիրը, Թուրքիան, Ճապոնիան և այլ երկրներ, բայց ապարդյուն: Իրաքը, որի մարդկային և նյութական ռեսուրսներն ավելի սահմանափակ էին, քան Իրանինը, համաձայն էր կրակի դադարեցմանը, բայց Իրանը գրավել էր շատ կոշտ դիրք և փորձում էր թելադրել իր պայմանները: Նա պահանջում էր, որ Իրաքն ընդուներ իր մեղավորությունը պատերազմը սկսելու հարցում և պատժվեր, վճարեր մեծ ռազմատուգանք և վերացվեր Սադամ Հուսեյնի գլխավորած քառասական վարչակարգը Իրաքում: Այդ պայմանների ընդունման դեպքում Իրանը պատրաստ էր բանակցություններ սկսել պատերազմի ավարտի վերաբերյալ:

Սադամ Հուսեյնը մերժեց իրանական պայմանները: Պատերազմը շարունակվեց, որը տարածվեց Պարսից ծոցի շրջանում, երբ սկսվեց, այսպես կոչված, «տանկերային պատերազմը»: Իրանի, Իրաքի և արաբական մյուս նավթարդյունահանող երկրների համար նավթի արտահանման գլխավոր ուղին Պարսից ծոցն էր, իսկ նավթի վաճառքից ստացվող դոլարները՝ պատերազմը ֆինանսավորելու գլխավոր աղբյուրը: Իրանը և Իրաքը սկսեցին ռմբակոծել Պարսից ծոցից դուրս եկող տանկերները, իսկ Իրանը 1986 թ. ակնապատեց Պարսից ծոցի ջրերը: Այդ բոլորի հետևանքով խորտակվեցին և վնասվեցին բազմաթիվ նավեր: «**Լլոյդ**» նավային ապահովագրական ընկերության տվյալներով՝ մինչև 1987 թ. հարձակման էր ենթարկվել 333 նավ:

«Տանկերային պատերազմի» մեջ ներգրավվեց նաև ԱՄՆ-ը: Պրեզիդենտ Ռեյգանը 1987 թ. մարտի 7-ի որոշմամբ բավարարեց Քուվեյթի կառավարության խնդրանքը՝ տասնմեկ քուվեյթյան նավեր դնել ԱՄՆ-ի դրոշի ներքո, պաշտպանել դրանք և ապահովել դրանց նավարկությունը: Հետագայում ԱՄՆ-ը իր պաշտպանության տակ վերցրեց նաև չեզոք երկրների նավերը: Ռեյգանը, պատասխանելով նրանց, ովքեր իրեն մեղադրում էին «կոլվերյական քաղաքականության մեջ», 1987 թ. սեպտեմբերի 24-ին հայտարարեց. «Իրանի քաղաքականությունը սպառնալիք է ստեղծում, որը կարող է ընդհատել նավարկության ազատությունը և նավթի ազատ արտահոսքը ծոցից»: Նա գտնում էր, որ չի կարելի թույլ տալ որևէ պետության՝ փակելու Հորմուզի նեղուցը:

Պարսից ծոցի շրջանում ամերիկյան ռազմանավերի, ինքնաթիռների և

ուղղաթիռների հայտնվելուց հետո տեղի ունեցան ընդհարումներ նրանց և իրանական ուժերի միջև:

Ամերիկյան միջամտությունն ավելի շիկացրեց իրադրությունը:

Ստեղծված պայմաններում իր գործունեությունն ակտիվացրեց Միավորված ազգերի կազմակերպությունը: 1987 թ. հուլիսի 20–ին ՄԱԿ–ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց №598 բանաձևը կրակը դադարեցնելու վերաբերյալ: Իրաքն անհապաղ արտահայտեց իր պատրաստակամությունը՝ կատարելու Անվտանգության խորհրդի որոշումը, մինչդեռ Իրանը գրավեց ժխտական դիրք: Պահանջվեց արյունալի պատերազմի ևս մեկ տարի, որպեսզի վերջապես բոլոր կողմերն էլ համոզվեին, որ անիմաստ էր պատերազմի հետագա շարունակությունը:

Այդ ընթացքում փոփոխություն տեղի ունեցավ Իրանի դիրքորոշման մեջ, որի հետևանքով դրանք բացվեցին կրակը դադարեցնելու վերաբերյալ համաձայնության առջև: 1988 թ. հուլիսի 18–ին Իրանը և Իրաքը հայտնեցին իրենց համաձայնությունը ՄԱԿ–ի №598 բանաձևին, որի հիման վրա հաստատվեց հրադադար:

Մոտ ութ տարի տևած պատերազմն ավարտվեց: Երկու կողմերն էլ պահպանեցին իրենց տարածքային ամբողջականությունը: Սակայն նրանք չհասան իրենց առջև դրված քաղաքական նպատակների իրագործմանը: Իրաքին չհաջողվեց ճզմել իրանական հեղափոխությունը և թուլացնել Իրանի դիրքերը տարածաշրջանում:

Իրանին չհաջողվեց հասնել Սադամ Հուսեյնի և Իրաքում հաստատված բաասական վարչակարգի տապալմանը: Իրաքը նրա քիկունքում կանգնած արաբական պետությունների օգնությամբ կարողացավ դիմակայել ավելի հզոր Իրանին և ամրապնդել իր դիրքերը արաբական աշխարհում:

Մերձավոր Արևելքը դեռ ուշքի չէր եկել իրանա–իրաքյան պատերազմից, երբ բացվեց պայքարի մի նոր ճակատ: 1990 թ. օգոստոսին Իրաքը ներխուժեց Քուվեյթ, կայծակնային արագությամբ բռնակցեց այն և հայտարարեց իր 19–րդ նահանգը: Աշխարհը շճմեց Սադամ Հուսեյնի այդ անսպասելի քայլից:

Իրաքի ագրեսիան հարևան «եղբայր» պետության դեմ նոր փորձության ենթարկեց իրանա–իրաքյան հարաբերությունները: Քուվեյթի օկուպացիան և Իրաքի անբարոյց մտադրությունը՝ նման քայլերի դիմել նաև Պարսից ծոցի մյուս պետությունների նկատմամբ, ուղղակիորեն շոշա-

փում էին Իրանի շահերը, քանի որ նա կարող էր փոխել իրադրությունը հոգուտ Իրաքի և սպառնալիք ստեղծել Իրանի անվտանգությանը: Իրանը դատապարտեց Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ և պահանջեց իրաքյան զորքերի դուրսբերումը այդ երկրից: Իրանը պաշտպանեց ՄԱԿ-ի որոշումները, որոնք ուղղված էին Քուվեյթի անկախության վերականգնմանը:

Սակայն Իրանը ցուցաբերեց որոշակի զուշավորություն և չմասնակցեց Իրաքի դեմ 1991 թ. փետրվարին սկսված պատերազմական գործողություններին, որը գլխավորում էր ԱՄՆ-ը: Իրանը միաժամանակ հերքեց նրան վերագրվող մտադրությունները Իրաքը մասնատելու և նրա հարավային շրջանները բռնակցելու վերաբերյալ:

Ի վերջո, Իրաքը պարտվեց և իր զորքերը հարկադրաբար դուրս բերեց Քուվեյթից, որը գոհունակությամբ ընդունվեց Իրանում:

Սակայն իրանա-իրաքյան հարաբերությունները դեռևս վերջնականապես չեն կարգավորվել: Դրանք շարունակում են խարսխվել զինադադարի խախտուտ հիմքի վրա:

5. ԻՐԱՆԱ-ՍԻՐԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Իրանա-արաբական հարաբերությունների լարվածության ընդհանուր ֆոնի վրա բացառություն են կազմում իրանա-սիրիական հարաբերությունները, որոնք Իրանում տեղի ունեցած հեղափոխության առաջին օրվանից ընդունեցին բարեկամական բնույթ և, ըստ էության, այդպիսին մնացին 80-ական թվականների ողջ ընթացքում և 90-ականների սկզբներին: Դա ունի իր պատճառները:

Այդ շրջանում Սիրիան գտնվում էր ծանր դրության մեջ, և Իրանում շիա հոգևորականության իշխանության գլուխ գալը, Սիրիայի ղեկավարությունը, մասնավորապես նրա պրեզիդենտ Հաֆիզ Ասադը, ընկալեցին որպես քաղաքական ասպարեզում նոր հնարավոր դաշնակցի հանդես գալ:

Սիրիայում պետական, քաղաքական, ռազմական, ինչպես նաև կառավարող բաաս կուսակցության մեջ առաջատար դիրքեր են զրավում ալավիները, թեև նրանք փոքրամասնություն են կազմում Սիրիայում և առաջացնում սուննի մեծամասնության որոշակի դժգոհությունը: Սուննիների որոշ

շրջանակներում անգամ կասկածի տակ էին վերցնում ալալիների լիարժեք մուսուլման լինելը:

Սակայն դեռևս 1973 թ. Լիբանանի շիաների հոգևոր առաջնորդ, ծագումով իրանցի և մուսուլմանական աշխարհում մեծ հեղինակություն վայելող իմամ Մուսա Սադրը հատուկ ֆետվայով (հրովարտակով) հաստատեց ալալիների իսկական մուսուլման լինելը, որոնք կազմում են շիաների հարազատ մասը:

Իրանում շիա հոգևորականության կողմից իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետո Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ Ասադը և ալալիները կարող էին ակնկալել Իրանի օգնությունը և որոշ հարցերում ապավինել նրան: Դրա կարիքը Սիրիայի ալալի ղեկավարությունը զգում էր սուննի ֆունդամենտալիստների դեմ մղվող պայքարում, որ ծավալվել էր Սիրիայում 70-ական թվականների վերջերին և 80-ականների սկզբներին: Եվ, իրոք, սիրիական ղեկավարությունը համապատասխան աջակցություն ստացավ իմամ Խոմեյնիից:

Լարված հարաբերություններ գոյություն ունեին Սիրիայի և Իրաքի միջև: Եվ Իրաքին դիմակայելու իր քաղաքականության մեջ Սիրիան ի դեմս Իրանի գտավ նոր դաշնակից: Իսկ Իրանի համար Սիրիան իր հերթին հանդիսանում էր ընդունելի պարտնյոր Իրաքի դեմ մղվող պայքարում:

Սիրիայի օժանդակությամբ Իրանին հաջողվեց ներթափանցել Լիբանան, սատար կանգնել Լիբանանի շիաներին՝ նրանց ցույց տալով ֆինանսական, նյութական, անգամ ռազմական օգնություն: Իրանի օգնությամբ Լիբանանում ստեղծվեց Հիդրոլիսի՝ Աստծո կուսակցությունը և մինչև օրս ամեն կերպ նպաստում է նրա գործունեության ծավալմանը: Դա հիմք է տվել որոշ հետազոտողների՝ այն տեսակետն արտահայտելու, որ Իրանից շիական հեղափոխության արտահանման թերևս ամենամպաստավոր դաշտը Լիբանանն է:

Եվ, վերջապես, Իրանի և Սիրիայի շահերը համընկնում են մահ Իսրայելի հարցում, որը նույնպես նպաստեց երկու պետությունների մերձեցմանը:

Իրանը հեղափոխությունից հետո հրաժարվեց Իսրայելի հետ շահի բարեկամական քաղաքականությունից, դատապարտեց, ինչպես արդեն նշվել է, Քեմալ Դեիլի համաձայնագիրը: Իսկ 1979 թ. փետրվարի 18-ին Իրանը խզեց դիվանագիտական հարաբերությունները Իսրայելի հետ, դադարեցրեց նրան նավթի մատակարարումը, ճանաչեց Պաղեստինի ազատագրու-

թյան կազմակերպությունը (ՊԱԿ)՝ Յասիր Արաֆաթի գլխավորությամբ՝ որպես Պաղեստինի արաբ ժողովրդի միակ ներկայացուցիչ, թույլատրեց Թեհրանում հիմնել ՊԱԿ –ի մշտական ներկայացուցչություն՝ նրան տրամադրելով Իսրայելի մայսկին դեսպանատան շենքը: 1979 թ. փետրվարի 17–ին Յասիր Արաֆաթը Թեհրանում հանդիպեց իմամ Խոմեյնիի հետ:

Իրանի կառավարության այդ քայլերը մեծ գոհունակությամբ ընդունվեցին Դամասկոսում՝ համարելով դրանք Մերձավոր Արևելքում Սիրիայի ազգային շահերին համապատասխանող քայլեր:

Սիրիայում գտնում էին, որ եթե Քեմալ Դևիդի համաձայնագրի հետևանքով Եգիպտոսը դուրս եկավ պայքարից, որը թուլացրեց արաբների դիրքերը իրանական հեղափոխության շնորհիվ, որը բշնամական դիրք գրավեց Իսրայելի նկատմամբ և իր աջակցությունը խոստացավ Պաղեստինի դիմադրական շարժմանը, արաբները հնարավորություն ստացան ձեռք բերել մի նոր դաշնակից, որն ի վիճակի էր փակելու Եգիպտոսի պայքարից դուրս գալու հետևանքով առաջացած վակուումը:

Հեղափոխությունից հետո Հաֆիզ Ասադը շնորհավորական ջերմ հեռագիր ուղարկեց իմամ Խոմեյնիին և նրան իր նախարարներից մեկի միջոցով ընծայեց մի գեղազարդ Կորան: Շնորհակալությամբ ընդունելով այդ ընծան և համբուրելով մուսուլմանների սուրբ գիրքը՝ Խոմեյնին երախտագիտությամբ հիշեց, որ Սիրիան այն երկիրն էր, որը նրան քաղաքական ապաստան առաջարկեց, երբ նա 1978 թ. հոկտեմբերին արտաքսվեց Իրաքից:

Իրանա–սիրիական հարաբերությունների համար կարևոր նշանակություն ունեցավ Սիրիայի արտաքին գործերի նախարար Աբդել Հալիմ Խադդամի պաշտոնական այցը Թեհրան, որը կայացավ 1979 թ. օգոստոսին: Թեհրան իր այցի ժամանակ նա հրապարակայնորեն ընդունեց Իրանի իսլամական հեղափոխության կարևոր հիմնադրույթներից մեկը՝ հայտարարելով, որ իրանական հեղափոխությունը մեր ժամանակակից պատմության ամենակարևոր իրադարձությունն է:

Իրանի և Սիրիայի միջև պետական հարաբերությունները դրվեցին ամուր ու բարեկամական հիմքերի վրա, և զարգացավ համագործակցությունը նրանց միջև տնտեսության, ֆինանսների, առևտրի և այլ բնագավառներում:

Երբ Իրաքը հարձակվեց Իրանի վրա, և սկսվեց իրանա–իրաքյան պատերազմը, Սիրիան դատապարտեց Սադամ Հուսեյնի այդ քայլը և պաշտպանեց Իրանին: Սիրիայի այդ դիրքորոշումը մնաց անփոփոխ պատերազ-

մի ամբողջ ութ տարիների ընթացքում: Սիրիայի դիրքորոշումը բացատրվում էր ինչպես մինչ այդ գոյություն ունեցող սիրիա-իրաքյան հակասություններով, այնպես էլ նոր հանգամանքներով: Սիրիան գտնում էր, որ արաբների թշնամին ոչ թե Իրանն է, որը պաշտպանում է պաղեստինցիների պայքարը, այլ Իսրայելը, որի դեմ պետք է համախմբվեն արաբները: Այդ պատճառով էլ Հաֆիզ Ասադը Իրաքի պատերազմը Իրանի դեմ հայտարարեց «սխալ պատերազմ սխալ թշնամու դեմ՝ սխալ ժամանակ սկսված»:

Իրանին պաշտպանելը Հաֆիզ Ասադը բացատրում էր նաև նրանով, որ Իրանի ղեկավարությունը նրան տվել էր հաստատուն երաշխիքներ առ այն, որ նա չի ձգտում տարածքային ձեռքբերումների՝ ի հաշիվ արաբների, և պատրաստ է հարգել հարևան արաբական պետությունների տարածքային ամբողջականությունը: Ելնելով դրանից՝ Սիրիան փորձեց Սաուդյան Արաբիայի և Հորդանանի միջոցով ճնշում գործադրել Սադամ Հուսեյնի վրա, որպեսզի նա դադարեցնի պատերազմական գործողությունները, սակայն որևէ դրական արդյունքի չհասավ:

Այնուհետև Սիրիան (ինչպես նաև Ալժիրը և Լիբիան) ստացավ խորհրդային կառավարության համաձայնությունը Իրանին զենք վաճառելու վերաբերյալ: 1981 թ. օդային կայուն կապ հաստատվեց Թեհրանի և Դամասկոսի միջև:

Իրանա-սիրիական հարաբերությունների զարգացման հետագա արդյունքն այն եղավ, որ իրանական կամավորները սկսեցին Սիրիայի տարածքով անցնել Լիբանան, որտեղ նրանք պատերազմում էին Իսրայելի և նրա համախոհների դեմ: Դա հիմք տվեց ասելու, որ ձևավորվել է Թեհրան-Դամասկոս-Լիբանան շիաներ առանցքը:

Ի պատասխան Սիրիայի իրանամետ դիրքորոշման և մերձեցման՝ 1980 թ. Բաղդադում տեղի ունեցավ հարձակում սիրիական ղեսպանատան վրա, իսկ հոկտեմբերի 12-ին Իրաքը խզեց դիվանագիտական հարաբերությունները Սիրիայի հետ: Դա ստիպեց Սիրիային ավելի մերձեցնել Իրանին: 1982 թ. Սիրիան փակեց իր սահմանները Իրաքի հետ և իր տարածքով անցնող իրաքյան նավթամուղերը: Դրանից հետո Հաֆիզ Ասադը Իրանի հետ կնքեց լայնածավալ առևտրական պայմանագիր, որով Իրանը Սիրիային արտոնյալ պայմաններով նավթ և նավթամթերքներ էր մատակարարում: 1984 թ. մայիսի 23-ին Իրանի մեջլիսը հավանություն տվեց Սիրիային նավթ վաճառելու և մատակարարելու համաձայնագրին,

ինչպես նաև Իրանին Սիրիայի 1 մլրդ դոլարի պարտքը մարելու մասին օրինագծին:

Իրանա-սիրիական հարաբերությունների հետագա զարգացման և խորացման վրա բարերար ազդեցություն ունեցան երկու պետությունների դեկավարների կանոնավոր փոխալսելությունները, որոնց ընթացքում քննարկվում և համաձայնեցվում են նրանց քաղաքական քայլերը, մշակվում և ստորագրվում զանազան համաձայնագրեր և այլն:

Իրանա-սիրիական հարաբերությունները ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել որպես բարեկամական և կառուցողական, որոնք ծառայում են ոչ միայն երկու երկրների կենսական շահերին, այլև մերձավորարևելյան տարածաշրջանում քաղաքական կայունության հաստատմանը:

ԳԼՈՒԽ III. ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԿԱՐԾԵՑՅԱԼ ԱՆԳՈՐՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ը թեև աշխարհագրական առումով չի պատկանում Մերձավոր Արևելքին, սակայն այնքան է մխրճված տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և ռազմաստրատեգիական խնդիրների մեջ, ունի այնպիսի մեծ կշիռ և ազդեցություն տարածաշրջանի քաղաքական եղանակի ձևավորման վրա, որ անհնար է ճիշտ պատկերացում կազմել տարածաշրջանի հիմնախնդիրների և Իրանի դերի մասին՝ առանց անդրադառնալու ԱՄՆ-ի հետ Իրանի հարաբերություններին:

ԱՄՆ-ի համար մեծ կորուստ էր շահի տապալումը, որով փլվեց նրա մերձավորարևելյան քաղաքականության հուսալի հենասյուներից մեկը: Ուստի ԱՄՆ-ում զգուշավորությամբ, եթե ոչ տագնապով էին հետևում քաղաքական դեպքերի զարգացմանը Իրանում և երկրի նոր ղեկավարության քաղաքականությանը: Համեմայն դեպս, ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակները սկզբնական շրջանում գերադասում էին ձեռնպահ մնալ բացահայտ թշնամական, հակախոմեյնիական հայտարարություններից և գործողություններից:

1979 թ. փետրվարի 12-ին ԱՄՆ-ը պաշտոնապես ճանաչեց իրանական նոր վարչակարգը:

Իրանի նոր ղեկավարները թեև իշխանության գլուխ եկան արևմտյան, այդ թվում և ամերիկյան արժեքները մերժելու և իսլամի գտարյուն արժեքներին վերադառնալու, շահի արևմտամետ քաղաքականությունից արմատապես հրաժարվելու ալիքի վրա, այնուամենայնիվ, սկզբնական շրջանում նույնպես զսպվածություն էին ցուցաբերում և չէին ձգտում սրել միջպետական հարաբերությունները ԱՄՆ–ի հետ: Խոսքն այստեղ իրանական մամուլի էջերում, միտինգների և ցույցերի ժամանակ, փողոցներում և հասարակական այլ վայրերում ամբոխի կողմից ցուցաբերվող հակամերիկյան ելույթների մասին չէ, այլ երկու երկրների միջպետական հարաբերությունների, ուրոնք իրանական հեղափոխությանը հաջորդած առաջին շրջանում արտաքինապես նորմալ էին:

Թեհրանում և Վաշինգտոնում գործում էին ամերիկյան և իրանական դեսպանությունները, կատարվում էին պայմանագրերով ստանձնած պարտավորությունները և այլն: 1979 թ. կեսերին Թեհրան այցելեց ԱՄՆ–ի պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Էրիկ Ֆոն Մարբողը, որը Իրանի վարչապետ Բազարգանի հետ Իրանին զենք մատակարարելու հարցերը վերանայելու հուշագիր ստորագրեց: Նույն թվականի նոյեմբերի 1–ին ԱՄՆ–ի պրեզիդենտի Ազգային անվտանգության գծով խորհրդական Ջրիգոն Բեթինսկին և Իրանի վարչապետ Բազարգանը Ալժիրում կայացած հանդիպման ժամանակ քննարկեցին իրան–ամերիկյան հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Այս փուլում Իրանի և ԱՄՆ–ի միջև բացահայտ առճակատում գոյություն չունեի:

2. ԱՌՃԱԿԱՏՈՒՄ

Ամեն ինչ փոխվեց այն բանից հետո, երբ 1979 թ. նոյեմբերի սկզբներին ԱՄՆ–ի պրեզիդենտ Կարտերը որոշ երկմտանքից հետո, տեղի տալով Դավիթ Ռուկֆելլերի և Հենրի Կիսինջերի ճնշմանը, որոշեց բույլատրել քաղցկեղով հիվանդ Իրանի շահին՝ բուժման համար գալ ԱՄՆ: Պրեզիդենտ Կարտերի այդ որոշումը և Մուհամմադ Պահլավիի ժամանումը ԱՄՆ խոր դժգոհություն առաջացրեց Իրանում: Երկրի ղեկավարությունը կասկածում էր, որ Կարտերի այդ քայլի հետևում թաքնված էր շահին կրկին իշխանության գլուխ վերադարձնելու մտադրություն:

Շահի՝ Նյու Յորք ժամանելու օրը՝ 1979 թ. նոյեմբերի 4-ին, իրանցի ուսանողները, ի նշան բողոքի, գրոհեցին Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանության վրա և պատանդ վերցրեցին մեծաքանակ ամերիկյան դիվանագետների: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 5-ին, Իրանի կառավարությունը չեղյալ հայտարարեց ԱՄՆ-ի հետ ռազմական համագործակցության մասին դեռևս 1957 թ. կնքված պայմանագիրը:

ԱՄՆ-ը պահանջեց ազատ արձակել պատանդներին: Թեև վարչապետ Բազարգանը և արտաքին գործերի նախարար Իբրահիմ Յազդին խոստացան 48 ժամվա ընթացքում ազատ արձակել առևանգվածներին, բայց դա նրանց չհաջողվեց: Միայն որոշ ժամանակ անց բաց թողնվեցին ամերիկյան դեսպանության կին և սևամորթ աշխատակիցները:

Իրանը պահանջում էր ԱՄՆ-ից՝ իրեն հանձնել շահին և Իրանին վերադարձնել արտասահմանում գտնվող և շահին պատկանող հարստությունը: ԱՄՆ-ի կառավարությունը մերժեց իրանական կողմի պահանջը և դիմեց հակաքայլերի:

Նախ՝ ԱՄՆ-ը նոյեմբերի 9-ից դադարեցրեց 300 մլն դոլարի ռազմական պահեստամասերի առաքումը Իրան: Երեք օր անց պրեզիդենտ Կարտերի կարգադրությամբ դադարեցվեց նավթի ներմուծումը Իրանից: Իսկ նոյեմբերի 14-ից ստուգվեցին ԱՄՆ-ի բանկերում գտնվող իրանական հաշիվները՝ մոտ 6 մլրդ դոլար:

Քանի որ պատանդների ազատման հարցը տեղից չէր շարժվում, ԱՄՆ-ը 1980 թ. ընթացքում շարունակեց Իրանի վրա կոշտ ճնշում գործադրելու քաղաքականությունը: Կարտերի 1980 թ. ապրիլի 7-ի որոշմամբ՝ ԱՄՆ-ը խզեց դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ, ուժը կորցրած համարվեցին Իրանի քաղաքացիների՝ ԱՄՆ մտնելու իրավերները, արգելվեց ամերիկյան ապրանքների արտահանումը Իրան: Ապրիլի 8-ին ավելի քան 50 իրանական դիվանագետներ իրենց ընտանիքներով արտաքսվեցին ԱՄՆ-ից:

Նույն օրը ԱՄՆ-ի կառավարությունը դիմեց իր եվրոպական դաշնակիցներին՝ միանալու իրեն Իրանի նկատմամբ կիրառվող էմբարգոյի հարցում:

Շարունակելով Իրանի նկատմամբ պատժամիջոցների քաղաքականությունը՝ Կարտերի 1980 թ. ապրիլի 17-ի որոշումով արգելվեց ԱՄՆ-ի քաղաքացիներին՝ ճանապարհորդել և դրամական փոխանցումներ կատարել Իրան: Այդ նույն որոշումով արգելվում էին բոլոր տեսակի ներմուծումները Իրանից:

Ի պատասխան պրեզիդենտ Կարտերի դիմումի իր եվրոպական դաշնակիցներին՝ Եվրոպական ընդհանուր շուկայի երկրների արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը 1980 թ. ապրիլի 22-ին միաձայն որոշեց մայիսի 17-ից Իրանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառել, եթե մինչ այդ պատանդների հարցում առաջխաղացում չլինի: Նրանք նաև որոշեցին իրենց երկրներում կրճատել իրանական դեսպանության և Իրանում իրենց դեսպանությունների աշխատակիցների թվաքանակը: Իսկ Մեծ Բրիտանիան մայիսի 29-ից պատժամիջոցներ կիրառեց Իրանի նկատմամբ:

ԱՄՆ-ի կառավարությունը որոշեց ուժով ազատագրել պատանդներին: Այդ նպատակով հատուկ խմբի հանձնարարվեց 1980 թ. ապրիլի 24-26-ը իրականացնել այդ գործողությունը, որը ստացավ «Դեյվա» ծածկանունը: Սակայն այդ արկածախնդրությունը ձախողվեց:

Այնուհետև տեղի ունեցան իրադարձություններ, որոնք նպաստեցին իրադրության փոփոխմանը: 1980 թ. հուլիսին վախճանվեց Իրանի շահը, իսկ սեպտեմբերին սկսվեց իրանա-իրաքյան պատերազմը, որը ստիպեց նորովի մոտենալ ամերիկյան պատանդների և ընդհանրապես ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հարցին: 1980 թ. վերջերին Ալժիրի միջնորդությամբ բանակցություններ սկսվեցին ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Ուորեն Քրիստոֆերի և Խոմենյիի պատվիրակի միջև, որն ավարտվեց չորս կետից բաղկացած նախնական համաձայնագրի ստորագրությամբ: Իրանը պարտավորվում էր ազատ արձակել ամերիկյան պատանդներին, ամերիկյան կողմը պարտավորվում էր ապաստանեցնել ԱՄՆ-ի բանկերում գտնվող իրանական ակտիվները, շահի հարստության նկատմամբ Իրանի պահանջները քննարկել ԱՄՆ-ի դատարաններում, իսկ իրանական և ամերիկյան փոխադարձ ֆինանսական պահանջները հանձնել Հաագայի միջազգային դատարանին:

Սակայն համաձայնագրի վերջնական ստորագրումը ձգձգվեց, քանի որ իրանական կողմը ԱՄՆ-ից պահանջեց Ալժիր փոխանցել 2,5 մլոդ դոլար: Կարտերն այդ պահանջը համարեց անընդունելի և պատրաստվեց արտակարգ դրություն մտցնել երկրում ու կոնգրեսից խնդրել պատերազմ հայտարարել Իրանին:

Բարեբախտաբար, գործը դրան չհասավ: 1981 թ. հունվարի 19-ին համաձայնագիրը ստորագրվեց, սակայն ամերիկյան պատանդների ազատ արձակումը տեղի ունեցավ հաջորդ օրը՝ հունվարի 20-ին՝ ժամը 12.30-ին, այսինքն՝ այն բանից հետո, երբ պրեզիդենտական հեքթական ընտրություն-

ներում պարտություն կրած Կարտերը արդեն կես ժամ էր, ինչ իշխանությունը համձնել էր նորընտիր պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանին:

Իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ ԱՄՆ-ը պաշտոնապես չեզոք դիրք գրավեց: Նա, իհարկե, չէր ցանկանում Իրանի հաղթանակը, որն արմատապես կփոխեր իրադրությունը Մերձավոր Արևելքում՝ ի վնաս ԱՄՆ-ի: Սակայն նրա շահերին չէին համապատասխանում նաև Իրանի պարտությունը և Իրաքի հաղթանակն ու հետագա ուժեղացումը՝ իր քաղաքական հետևանքներով: Այդ պատճառով էլ ԱՄՆ-ը չհարեց որևէ կողմի և պաշտոնապես համոզեց էր գալիս պատերազմական գործողությունները դադարեցնելու և վիճելի հարցերը քաղաքական բանակցությունների միջոցով լուծելու օգտին: Դրա հետ միասին ԱՄՆ-ը ուշադիր հետևում էր դեպքերի զարգացմանը՝ պատրաստ անհրաժեշտության դեպքում անմիջապես միջամտելու:

Շուտով նման առիթը ներկայացավ: 1985 թ. Իրանի հետ կապված ուժերը, որոնցում ընդգրկված էին Հիզբոլլահի, Իսլամական ջիհադի և Դ-աավա աշ Շիա կազմակերպությունները, Լիբանանում առևանգեցին յոթ ամերիկացիների: Դա չէր կարող էլ ավելի չարել ամերիկա-իրանական հարաբերությունները, որոնք, չնայած 1980 թ. Ալժիրում պատանդների վերաբերյալ կնքված համաձայնագրին, շարունակում էին մնալ լարված, կարելի է ասել՝ նույնիսկ բշտամական: ԱՄՆ-ը Իրանը դասեց ահաբեկչությունը խրախուսող պետությունների շարքը: Իսկ Իրանը Իրաքի դեմ պատերազմում ԱՄՆ-ի չեզոքությունը համարեց որպես իր նկատմամբ բշտամական դիրքորոշում:

3. «ԻՐԱՆԳԵՅՑ» ԵՎ «ԻՐԱՆ-ԿՈՆՏՐԱՍ» ԳՈՐԾԱՐՔԸ

Սակայն մրճուրտը իրանա-ամերիկյան հարաբերություններում 80-ական թվականների կեսերից սկսեց փոխվել: Երկու կողմերն էլ ձգտում էին ինչ-որ ձևով երկխոսություն սկսել: 1985 թ. հուլիսին Իրանից Իսրայելի միջոցով ազդանշան հասավ ԱՄՆ-ին, որ իրանական բարձրաստիճան պաշտոնյաները պատրաստ են օգտագործել իրենց ազդեցությունը Հիզբոլլահի վրա ամերիկյան պատանդներին ազատելու գործում՝ դրա դիմաց ակնկալելով ԱՄՆ-ի օգնությունը Իրանին զենք մատակարարելու հարցում: Իրանական կողմի այդ մտադրության մասին ԱՄՆ-ի պրեզիդենտի Ազգային անվտանգության գծով խորհրդական

Մակֆարլեյնին հայտնեց Իսրայելի արտաքին գործերի նախարարության տնօրեն Դավիթ Կիմչեն: Մակֆարլեյնն այս առաջարկության մասին տեղյակ պահեց պրեզիդենտ Ռեյզանին, որը ցանկություն հայտնեց օգտվել այդ հնարավորությունից: Այսպես սկսվեց այն գործը, որը հետագայում ստացավ «Իրան–Կոնտրաս» կամ «Իրանգեյթ» անունը՝ «Լոբերգեյթի» նմանակությամբ:

ԱՄՆ–ը և Իսրայելը համաձայնության եկան, որ Իսրայելը որոշ քանակի զենք, այդ թվում և հրթիռներ կվաճառի Իրանին, իսկ ԱՄՆ–ը դրանք կփոխհատուցի Իսրայելին: 1985 թ. օգոստոսի 30–ին Իսրայելը 100, իսկ սեպտեմբերի 14–ին՝ 408 հրթիռ փոխանցեց Իրանին: Հետագայում Իրանին մատակարարվող զենքի տեսականին և ծավալները մեծացան: Սակայն դրա դիմաց առևանգված ոչ մի ամերիկացի ազատ չարձակվեց:

1986 թ. մայիսին պրեզիդենտ Ռեյզանն արտոնեց ամերիկյան գաղտնի պատվիրակություն ուղարկել Թեհրան՝ բանակցություններ վարելու առևանգված ամերիկացիների ազատման և Իրանին զենք մատակարարելու հարցի շուրջ: Պատվիրակությունը Մակֆարլեյնի գլխավորությամբ Թեհրան ժամանեց մայիսի 25–ին, սակայն նրան ոչ մի բարձրաստիճան իրանական պաշտոնյա չդիմավորեց: Իսկ այն իրանցիները, որոնք հանդիպեցին Մակֆարլեյնի հետ օդանավակայանում, հրաժարվեցին նրա հետ բնօրինակ առևանգվածների հարցը: Ամերիկյան պատվիրակությանը ոչինչ չէր մնում անել, քան մայիսի 27–ին հեռանալ Թեհրանից:

Այդուհանդերձ, ԱՄՆ–ը որոշեց շրջափակել գաղտնի շփումները Իրանի հետ և շարունակել զենքի մատակարարումը առևանգված ամերիկացիների ազատ արձակման դիմաց: 1986 թ. սեպտեմբերին Վաշինգտոնում, ապա հոկտեմբերի սկզբին և վերջերին Ֆրանկֆուրտում կայացավ երեք գաղտնի հանդիպում ԱՄՆ–ի Ազգային անվտանգության խորհրդի բարձրաստիճան աշխատակից գեղապետ Նորտի և իրանական պատվիրակների միջև: Վերջապես կողմերը եկան համաձայնության առ այն, որ ԱՄՆ–ը Իրանին կմատակարարի զենքի նոր մեծ քանակություն, իսկ Իրանը աստճանաբար ազատ կարձակի առևանգված ամերիկացիներին: Այդ համաձայնագրի հիման վրա ԱՄՆ–ը 1986 թ. չորս անգամ զենք մատակարարեց Իրանին, որի դիմաց ազատ արձակվեցին մի քանի ամերիկացի առևանգվածներ:

Չենքի հետ կապված այս գործարքից ստացված գումարի մի մասը ԱՄՆ–ը գաղտնի կերպով փոխանցում էր Նիկարագուայի կոնտրամերին՝ օ-

րինական կառավարության դեմ ապստամբներից, թեև դա արգելվում էր ԱՄՆ–ի կոնգրեսի համապատասխան որոշումով:

ԱՄՆ–ի այս քաղաքականությունը շարունակվեց մինչև այն պահը, երբ Բեյրութում լույս տեսնող «Աշ–Շիրաս» ամսագիրը 1986 թ. նոյեմբերի 3–ին հաղորդում տպեց այդ մասին: Դա ցնցեց համաշխարհային հասարակայնությունը: ԱՄՆ–ի կառավարությունը հարկադրված էր դադարեցնել ԱՄՆ–Իսրայել–Իրան գաղտնի գործարքը: Կոնգրեսի որոշումով սկսվեց «Իրանգեյթի» հետաքննությունը:

Այդ գործարքից առաջին հերթին շահեց Իրանը, քանի որ նա այդ ժամանակ գտնվում էր ծանր դրության մեջ և կարողացավ իր համար այնքան անհրաժեշտ զենք ձեռք բերել:

Շահեց նաև Իսրայելը, որը շահագրգռված էր իրանա–իրաքյան պատերազմը շարունակելու մեջ, քանի որ այդ դեպքում նրա զլխավոր հակառակորդներից մեկը՝ Իրաքը, արյունաքամ էր լինում և նրա՝ բավականին մեծ բանակը գործում էր իրանական և ոչ թե իսրայելական ռազմաճակատում: Արյունաքամ էր լինում նաև նրա մյուս հակառակորդը՝ Իրանը:

